

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԾՐԱԳԻՐԸ

Բովանդակություն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ  
ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ.....3

1. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ .....6

1.1. ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊԵՐՈՒՄ 6

1.2. ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....7

1.3. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....9

1.4. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
16

2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....18

2.1. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ.....18

2.2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....20

3. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ .....21

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....21

3.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....26

3.3. ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....28

3.4. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ..32

4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, .....37

4.1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.....37

4.2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ .....39

4.3. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ.....43

4.4. Ժողովրդագրո՞ւթյուն, սոցիալապես ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ .....	45
4.5. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	48
4.6. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ.....	50
4.7. ՍՊՈՐՏ.....	50
5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ .....	52
5.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	52
5.2. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ .....	53
5.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	57
5.4. ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ .....	61
5.5. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ .....	62
5.6. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ.....	65
5.7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ .....	67

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ  
ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Արցախի Հանրապետության նախագահի ծրագիրը ներառում է նախագահի և գործադիր իշխանության գործունեության ոլորտային հիմնական առաջնահերթությունները և Հանրապետության զարգացման նախանշվող ուղիները 2020-2025 թվականների ժամանակահատվածում: Սույն ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրության, Արցախի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրի, ինչպես նաև «Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի ու «Միասնական հայրենիք» կուսակցության միջև կնքված հուշագրի դրույթները:

Ծրագիրը միտված է Արցախի Հանրապետության քաղաքացիների համար անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ կյանքի ապահովմանը և, որպես դրա երաշխավոր, հզոր ու արդյունավետ պետության կառուցմանը: Ծրագիրը կազմվել է հետևյալ անկյունաքարային սկզբունքների հիման վրա՝

1. մարդը բարձրագույն արժեք է, իսկ պետությունը՝ բարձրագույն արժեքին ծառայող հաստատություն:

2. հայոց միացյալ հայրենիքի անվտանգությունը, ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը և հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը ենթակա չեն որևէ վերապահման ու սակարկման:

3. իրավունքի գերակայությունն ու օրենքի առջև բոլորի հավասարությունը պետության երաշխավորմամբ պետք է ուղենիշ լինեն ներհասարակական բոլոր հարաբերություններում:

4. ժողովրդավարական պետական կառավարումն այլընտրանք չունի, և հարկ է անընդհատ զարգացնել դրա գործառնական պայմանները, մեխանիզմներն ու արդյունավետությունը:

5. սոցիալական պետության կառուցման վերջնանպատակը համընդհանուր բարեկեցության ու սոցիալական արդարության ապահովումն է:

6. համընդհանուր խնդիրները պետք է լուծում ստանան հավաքական ու ներդաշնակ աշխատանքով ու պատասխանատվությամբ՝ յուրաքանչյուրն իր

կարողությունների ու պարտավորությունների չափով՝ համերաշխ ու համագործակցային միջավայրում.

7. Արցախը համահայկական արժեք է ու ոգևորության աղբյուր, ինչը նշանակում է, որ ողջ հայությունը սատար է մեր ջանքերին, իսկ մենք կրում ենք համազգային պատասխանատվության մեր բաժինը և՛ հայոց միացյալ հայրենիքի անվտանգությունն ու համազգային արժանապատվությունը պաշտպանելու, և՛ համահայկական բոլոր խնդիրների լուծման հարցում:

Փաստ է, որ ընդհանրապես աշխարհը և մասնավորապես մերձավոր տարածաշրջանը փոփոխվում են ոչ թե տարիների, այլ՝ ամիսների, երբեմն էլ՝ օրերի ընթացքում: Այդ ամենը հաշվի առնելով՝ սույն ծրագիրը չի կարող լինել քարացած փաստաթուղթ: Ուստի, պետական կառավարման համակարգը պետք է լինի ճկուն, կարողանա արագ և արդյունավետ կերպով արձագանքել Հանրապետության շուրջը ծագող ու անընդհատ փոփոխվող մարտահրավերներին: Այդպիսի մարտահրավերներից մեկն էլ COVID-19 համավարակն է, որից բխող հիմնախնդիրների լուծումն ու հետևանքների վերացումն առնվազն կարճաժամկետ ու միջնաժամկետ կտրվածքում լինելու են պետության առաջնային ուշադրության ներքո, քանի որ այն անմիջականորեն ազդում է կյանքի գրեթե բոլոր ոլորտների ու նախատեսված ծրագրերի վրա:

Սույն ծրագրի իրագործման հիմնարար ուղենիշներն են՝

1) Հանրապետության պաշտպանունակության մակարդակի հետևողական բարձրացումը և՛ ռազմական, և՛ քաղաքացիական պաշտպանության ուղղություններում.

2) Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման և միջազգային գործնական կապերի հաստատման ու ամրապնդման ուղղությամբ շարունակական ջանքերի գործադրումը.

3) Մայր Հայաստանի հետ ինտեգրացիայի աստիճանի բարձրացումը և Սփյուռքի հետ փոխգործակցության խորացումն ու ընդլայնումը.

4) տարեկան առնվազն 8 տոկոս միջին տնտեսական աճի ապահովումը.

5) ձեռներեցության, նորարարության խթանումը, ստեղծարարության քաջալերումը, մարդու ինքնաիրացման համար բարենպաստ պայմանների ապահովումը.

6) աշխատատեղերի ստեղծման խթանումը՝ ապահովելով ավելի քան 5,000 նոր աշխատատեղ.

7) գործարար և ստեղծարար ծրագրերի իրականացման բոլոր փուլերում խորհրդատվական ու ֆինանսական աջակցության ցուցաբերումը՝ ներառելով նաև խնդիրների առջև կանգնած տնտեսավարող սուբյեկտների առողջացման եղանակներ.

8) արդարադատության համակարգի բարեփոխումը՝ աստիճանաբար ներդնելով վերականգնողական արդարադատության բաղադրատարրեր.

9) մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության մշակումը և իրագործումը.

10) պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, ներառյալ՝ պետական տարբեր ծառայությունների ու գործընթացների թվայնացումը.

11) տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգերի հիմնարար բարեփոխումը.

12) կրթության որակի շարունակական բարձրացումը և բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար կրթական համակարգի ներդնումը.

13) գիտության կիրառական ճյուղերի խթանումը.

14) բոլոր քաղաքացիներին մատուցվող բժշկական տարբեր ծառայությունների համար պետպատվերի շրջանակների ընդլայնումը մինչև 100 տոկոսի չափով.

15) հիփոթեքային աջակցության ծրագրերի ընդլայնումը՝ առաջնորդվելով «յուրաքանչյուր ընտանիքի՝ առանձին բնակարան» սկզբունքով.

16) տարեկան մինչև 1,000 բնակարանի կառուցումը.

17) սպաների ընտանիքների բնակարանային հիմնախնդրի լուծումը.

18) թոշակների, սոցիալական այլ վճարների և աշխատավարձերի շարունակական բարձրացումը.

19) փախստականների սոցիալական հիմնախնդիրների լուծումը.

20) պարենային և էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացումը.

21) գյուղատնտեսությունում ապահովագրության պիլոտային համակարգի ներդնումը.

22) մինչև 40,000 հեկտար ոռոգովի տարածքների ապահովումը.

23) տնտեսության թվայնացման ուղղությամբ ջանքերի ակտիվացումը.

24) տարեկան շուրջ 80 կմ ճանապարհի կառուցումը.

25) գյուղական բնակավայրերում տարեկան մինչև 300,000 քառակուսի մետր ճանապարհի սալապատումը.

26) շուրջօրյա ջրամատակարարում չունեցող բնակավայրերում ջրամատակարարման նոր համակարգերի կառուցումը:

## 1. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

### 1.1. ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊԵՐՈՒՄ

Պաշտպանության բանակն Արցախի Հանրապետության ու նրա ժողովրդի անվտանգության հիմնական երաշխավորն է: Այն նաև տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանման կարևոր գործոններից է: Պաշտպանության բանակի մարտունակության հետևողական բարձրացումը մեր պետականաշինության առանցքային ուղղություններից է:

Արցախի Հանրապետության ռազմավարությունն անվտանգության ոլորտում հիմնված է ակտիվ պաշտպանության գաղափարի վրա: Մենք ագրեսոր չենք, սակայն մեզ սպառնացող ագրեսիայի կամ անխուսափելի վտանգի դեպքում ռազմական գործողությունները տեղափոխելու ենք ագրեսոր պետության տարածք՝ նրան պարտադրելով խաղաղություն:

Բանակաշինության կարևորագույն ուղղություններից են՝

1) պետական սահմանի ամուր պաշտպանությունը և հակառակորդի ցանկացած ոտնձգության արդյունավետ կանխարգելումն ու կասեցումը.

2) հանրապետության պաշտպանական համակարգի և առաջնային գծի շարունակական ամրապնդումն ու ուժեղացումը.

3) զինված ուժերի մարտական պատրաստվածության, ղեկավարման համակարգի արդյունավետության հետևողական բարձրացումը.

4) ժամանակակից զինտեխնիկայով և սպառազինությամբ բանակի շարունակական համալրումը.

5) զորքերի պաշտպանվածության աստիճանի բարձրացումը.

6) կապի ու տեսադիտարկման համակարգերի զարգացումը.

7) սպայական անձնակազմի պրոֆեսիոնալ պատրաստվածության մակարդակի բարձրացումը.

8) հանրապետության զորահավաքային պատրաստականության կատարելագործումը.

9) զինճառայողների ծառայողական և սոցիալական պայմանների շարունակական բարելավումը.

10) զինված ուժերի շարքերում բարոյահոգեբանական վիճակի բարելավումը, ոչ կանոնակարգային հարաբերությունների դեմ հետևողական պայքարը, անձնակազմի շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակչական աշխատանքների ակտիվացումը.

11) նախագորակոչային տարիքի երիտասարդության հետ ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված աշխատանքների ակտիվացումը.

12) քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործումը.

13) բանակաշինության և անվտանգության ոլորտներում հայկական երկու պետությունների փոխգործակցության հետևողական ընդլայնումը և խորացումը:

## 1.2. ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներքին անվտանգության ապահովման ոլորտում առաջնային խնդիրներից է հանցավորության մակարդակի շարունակական նվազեցումը, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի շարունակական բարձրացումը: Այս գործում կարևորագույն հայեցակարգային առաջնահերթությունը քաղաքացի-իրավապահ մարմիններ համագործակցության նոր մշակույթի ձևավորումն ու ամրապնդումն է: Այդ նպատակով նախատեսվում է՝

1) ներդնել ոստիկանության ծառայողների արդիական պաշտպանության համակարգ.

2) կատարելագործել հասարակական կարգի պահպանության ծառայության գործունեությունը՝ համագործակցելով քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ.

3) կազմակերպել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը՝ հաշվի առնելով ռազմավարական, տարիքային, տարածքային, արտադրական-տարածքային առանձնահատկությունները և ոստիկանության կայուն գործունեությունը.

4) իրականացնել ոստիկանության գործունեության ու կառուցվածքային բարեփոխումներ՝ մարդու անվտանգության ապահովման, հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականիման, կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման, հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման և կոռուպցիայի դեմ անզիջում պայքարի կազմակերպման նպատակով ոստիկանության վրա դրված խնդիրներն առավել արդյունավետ իրականացնելու համար.

5) քաղաքացիական հասարակության զարգացումը խթանելու նպատակով վերջինիս խրախուսել՝ ներգրավվելու հանցագործությունները և վարչական իրավախախտումները բացահայտելու, ինչպես նաև ոստիկանության գործունեությունը վերահսկելու գործում.

6) հետևողականորեն բարելավել աշխատանքային պայմանները, նյութատեխնիկական հագեցվածությունը, ոստիկանության ծառայողների իրավական և սոցիալական երաշխիքների ապահովումը, այդ թվում՝ բնակարանային պայմանները, աշխատանքի վարձատրությունը, առողջական վիճակի պահպանությունը.

7) շարունակական բարեփոխումներ իրականացնել հանրային ծառայությունների մատուցման բնագավառում «մեկ կանգառ՝ մեկ պատուհան» սկզբունքով ծառայություններ մատուցելու ուղղությամբ.

8) կադրերի ընտրության, առաջխաղացման, ոստիկանությունում ծառայության անցնելու հավասար մատչելիություն ապահովելու նպատակով ներդնել մրցութային կարգ, միջոցներ ձեռնարկել երիտասարդ, բանիմաց և խոստումնալից կադրերի ռեզերվ ստեղծելու ուղղությամբ:

9) Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում իրականացվելիք քաղաքականությունը նպատակաուղղված է հնարավոր աղետների ու պատերազմների հետևանքներից մարդու կյանքին, առողջությանը և ունեցվածքին հասցվող վնասի, մշակութային արժեքների հնարավոր կորուստների նվազեցմանն ու բացառմանը, աղետների ռիսկի կառավարման և քաղաքացիական պաշտպանության գործուն համակարգ ունենալուն, ինչպես նաև պետական նյութական պահուստի կայացմանն ու արդիականացմանը:

Նախատեսվում է բարեփոխումների և աշխատանքների իրականացում, մասնավորապես, հետևյալ ուղղություններով՝



10) աղետների ռիսկի նվազեցման մեխանիզմների կատարելագործում, գիտական և կրթական ներուժի զարգացում, հանրային իրազեկման ապահովում և վերլուծական կարողությունների հզորացում.

11) արտակարգ իրավիճակների և մարտական գործողությունների վերսկսման դեպքում քաղաքացիական պաշտպանության դերի ու արդյունավետության բարձրացում և դրանով իսկ մարդկային, նյութական և մշակութային արժեքների հնարավոր կորուստների նվազեցում.

12) արտակարգ իրավիճակներում շահագրգիռ գերատեսչությունների գործողությունների կանոնակարգում.

13) քաղաքացիական պաշտպանության միասնական կառավարման կետերի համակարգի ստեղծում, Արցախի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության կառավարման երկրորդ և երրորդ մակարդակների պահեստային կառավարման կետերի գործունեության կարգի սահմանում.

14) պետական փրկարարական համակարգի կատարելագործում և զարգացում՝ այն աստիճանաբար համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին.

15) տեսչական գործառույթների բարելավում՝ արտակարգ իրավիճակների դեմ պայքարն արդյունավետ կազմակերպելու նպատակով.

16) ժամանակակից պահանջներին համապատասխան արհեստավարժ մասնագետների պատրաստում և անհրաժեշտ կադրային բազայի ստեղծում:

Պետական նյութական պահուստի բնագավառում նախատեսվում է՝

1) պետական նյութական պահուստի կարիքների համար ժամանակակից պահանջներին համապատասխան շենք-շինությունների կառուցում.

2) պետական նյութական պահուստի շարունակական համալրում:

### 1.3. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես միջազգային հանրության պատասխանատու անդամ՝ Արցախի Հանրապետությունը շահագրգռված է տարածաշրջանային և համաշխարհային կայուն, արդար և ժողովրդավարական կարգի ամրապնդմամբ, ինչը թույլ կտա ապահովել պետությունների հավասար ու անբաժանելի անվտանգությունը և կօժանդակի նրանց տնտեսական զարգացմանը:

Արցախի Հանրապետությունը, վարելով բազմավեկտոր, հավասարակշռված և պրագմատիկ արտաքին քաղաքականություն, փոխադարձ հարգանքի հիման վրա կշարունակի բոլոր պետությունների հետ բարեկամական, փոխշահավետ և իրավահավասար քաղաքական ու տնտեսական հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու ուղեգիծը:

Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներն են՝ ազգային շահերի պաշտպանությունը, անվտանգության ապահովումը, նրա ինքնիշխանության և տարածքային ամբողջականության երաշխավորումը՝ որպես խաղաղության պահպանման կարևոր գործոն, տարածաշրջանում հաստատուն դիրքերի պահպանումն ու ամրապնդումը, ինչպես նաև երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային ու մտավոր ներուժի զարգացման համար բարենպաստ արտաքին պայմանների ստեղծումը:

Արցախի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերների բարդությունն ու բազմաբնույթ լինելը պահանջում են իշխանության բոլոր մարմինների և համապատասխան գերատեսչությունների համակարգված գործողություններ երկրի արտաքին քաղաքական շահերի ապահովման համար: Արտաքին քաղաքականության ոլորտի գերակա ուղղությունները կլինեն՝

- 1) Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը.
- 2) ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը.
- 3) տարբեր մակարդակներում Արցախի Հանրապետության միջազգային կապերի զարգացումն ու խորացումը, հանրապետության ներգրավումը միջազգային գործընթացներում և հակազդումը նրան մեկուսացնելու փորձերին.
- 4) Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդումը և Մայր Հայաստանի հետ ինտեգրացիայի աստիճանի խորացումը.
- 5) աջակցությունը Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը, այդ թվում նաև՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման միջոցով.
- 6) արտերկրում Արցախի դրական կերպարի ամրապնդումը.
- 7) միջազգային կոնվենցիաներին Արցախի Հանրապետության միացման գործընթացի շարունակումը և դրանցով նախատեսված դրույթների կատարումը:

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացում կշարունակվեն հետևողական ջանքերը նախորդ տարիների դրական միտումներին անշրջելի բնույթ հաղորդելու ուղղությամբ: Ուշադրության կենտրոնում կմնա տարբեր երկրների օրենսդիր մարմինների հետ աշխատանքը ինչպես ազգային, այնպես էլ վարչական մակարդակներում՝ Արցախի ինքնորոշման իրավունքն ու անկախությունը սատարող բանաձևերի ընդունման, ինչպես նաև նման փաստաթղթերով նախատեսված գործնական նախաձեռնությունների իրականացման նպատակով: Միջազգային ճանաչման գործընթացի հետագա զարգացումն ու ընդլայնումը կարևոր ներդրում կդառնա Արցախի անվտանգության, ինչպես նաև տարածաշրջանում կայունության ամրապնդման գործում՝ որպես խաղաղության ապահովման լրացուցիչ քաղաքական և դիվանագիտական միջոց:

Անկախության տարիների ընթացքում Արցախի Հանրապետությունը ճանաչում է գտել որպես խաղաղասեր, ժողովրդավարական և բաց պետություն, վստահելի գործընկեր տարածաշրջանային կայունության և անվտանգության ապահովման հարցում:

Կշարունակվի միջազգային կոնվենցիաներին Արցախի Հանրապետության միացման և կոնվենցիաների դրույթների կատարման մասին պարբերական հաշվետվությունների պատրաստման գործընթացը: Միջազգային կոնվենցիաներին միանալը թույլ կտա հիմնվել միջազգային հանրության առաջադեմ փորձի վրա, փոխկապակցված աշխարհի մաս կազմել, ամրապնդել ու զարգացնել պետական և քաղաքացիական ինստիտուտները, օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին: Հաշվի առնելով արմատական բարեփոխումների օրակարգը՝ հատուկ տեղ կհատկացվի ժողովրդավարական զարգացման, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ուղղություններին: Բացի այդ, տվյալ ուղղությամբ աշխատանքները թույլ կտան բարձրացնել իրազեկվածությունն Արցախի, մասնավորապես՝ պետականաշինության իրավական ասպեկտների մասին և ցուցադրել, որ ներքին և արտաքին քաղաքականության մեջ պետությունն առաջնորդվում է միջազգային համընդհանուր նորմերով և սկզբունքներով:

Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում Արցախի Հանրապետության իշխանությունները այսուհետ ևս

կառաջնորդվեն Արցախի ժողովրդի համար երկու բարձրագույն արժեքներով՝ անկախությամբ և անվտանգությամբ, որոնք չեն կարող վտանգի տակ դրվել կամ ենթարկվել սակարկության:

Հակամարտության խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի: Արցախի Հանրապետությունը կշարունակի հետևողական ջանքեր գործադրել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության միջնորդությամբ հակամարտության համապարփակ կարգավորմանը հասնելու համար: Նպատակաուղղված աշխատանք կտարվի Արցախի ժողովրդի կողմից իր ինքնորոշման անքակտելի իրավունքի իրացման փաստի ճանաչման ուղղությամբ՝ որպես ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմք: Հակամարտության կարգավորումը պետք է նաև հաշվի առնի առկա իրողությունները և լիովին արտացոլի Ադրբեջանից հայ փախստականների և Արցախի գրավված տարածքներից ներքին տեղահանված անձանց շահերը:

Անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցային գործընթացում Արցախի Հանրապետության ներգրավվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ՝ բանակցությունների եռակողմ ձևաչափը վերականգնելու նպատակով: Արցախի Հանրապետության իշխանությունները պետք է լիարժեք ու լիիրավ հիմունքներով մասնակցեն հակամարտության խաղաղ և վերջնական կարգավորման գործընթացի բոլոր փուլերին:

Միջազգային միջնորդների, ինչպես նաև միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ կշարունակվեն խորհրդատվությունները ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության գոտում վստահության ամրապնդման միջոցների իրականացման շուրջ՝ խաղաղ կարգավորման գործընթացի առաջնական համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով:

Հատուկ ուշադրություն կդարձվի կրակի դադարեցման ռեժիմի ամրապնդմանն ու Արցախի Հանրապետության և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում հնարավոր վտանգների նվազեցման ինչպես միջազգային, այնպես էլ սեփական մեխանիզմների ներդրման նախաձեռնություններին՝ ռազմական գործողությունների վերսկսման հնարավորությունը բացառելու և խաղաղ գործընթացի անշրջելիությունն ապահովելու նպատակով:

Արցախի Հանրապետությունը գիտակցում է տարածաշրջանում անվտանգության պահպանման իր բաժին պատասխանատվությունը և ընդհանուր խնդրի կարգավորման նպատակով պատրաստ է համագործակցել շահագրգիռ բոլոր կողմերի հետ: Երկրի ռազմական անվտանգության բարձրացմանը զուգահեռ մեծ ուշադրություն կդարձվի ռազմական սպառնալիքների և մարտահրավերների չեզոքացման քաղաքական և դիվանագիտական միջոցներին:

Անթույլատրելի է, որ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը կամ հակամարտության կողմերից մեկի դիրքորոշումն օգտագործվի որպես պատրվակ Արցախը մեկուսացնելու, ինչպես նաև մարդու իրավունքների առաջնդմանը, մարդկանց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանն ուղղված միջազգային գործընթացներում Արցախի ներգրավվածությանը խոչընդոտելու համար: Նման մոտեցումը հակասում է արդարության և մարդկանց իրավահավասարության սկզբունքներին, առանց որոնց հաշվի առնման անհնարին է հասնել հակամարտության վերջնական կարգավորմանը:

Արցախի Հանրապետությունն այսուհետ ևս կձգտի հասնել միջազգային հանրության ու համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման առավել բարձր մակարդակի: Քայլեր կձեռնարկվեն ուղղված ապակենտրոնացված համագործակցության ձևաչափով օտարերկրյա պետությունների հետ Արցախի բարեկամական հարաբերությունների առաջանցիկ զարգացմանը ինչպես համայնքների, այնպես էլ վարչական միավորների մակարդակով: Ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանը զուգահեռ կշարունակվեն ջանքերն արդեն առկա և հաստատվող կապերին գործնական բնույթ հաղորդելու ուղղությամբ, ինչը թույլ կտա զանազան ծրագրեր իրականացնել մշակույթի, կրթության, սպորտի, առևտրի և տեղական ինքնակառավարման ոլորտներում:

Արցախի Հանրապետության միջազգային կապերի հաստատման և զարգացման մեջ կշարունակի կարևոր տեղ զբաղեցնել խորհրդարանական դիվանագիտությունը, որի շնորհիվ տարբեր երկրներում ձևավորվել և գործում են Արցախի հետ բարեկամության շրջանակներ (խմբեր): Խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունները թույլ են տալիս նոր պետությունների ու վարչական միավորների ներգրավմամբ ընդլայնել նմանատիպ միավորների ցանցը, որոնց կազմում ընդգրկվում են

պատգամավորներ, քաղաքական, հասարակական և հոգևոր գործիչներ, ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ:

Աջակցություն կցուցաբերվի «ժողովրդական դիվանագիտության» ինստիտուտին՝ տարբեր ոլորտներում միջազգային կապերի ու համագործակցության հաստատման և զարգացման մեջ քաղաքացիական հասարակության դերի բարձրացման նպատակով:

Արտաքին քաղաքականության կարևոր ուղղություն կմնա արտերկրում Արցախի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունը, մասնավորապես՝ միջոցներ կձեռնարկվեն ապահովելու Արցախի Հանրապետության պետական մարմինների արագ արձագանքումն արտերկրում բնակվող քաղաքացիների՝ ԱԳՆ խողովակներով ստացվող դիմումներին:

Տեղեկատվական ոլորտում կշարունակվեն ջանքերն՝ ուղղված Արցախի Հանրապետության իրական ընկալմանը՝ որպես կայացած ժողովրդավարական և իրավական պետություն, որն իր պատասխանատու քաղաքականությամբ նպաստում է տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության ամրապնդմանը: Կշարունակվի աշխատանքը Արցախի արտաքին քաղաքական առաջնահերթությունների, պետականաշինության գործընթացի, ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության էության և դրա կարգավորման շուրջ Արցախի դիրքորոշման մասին օբյեկտիվ և հավաստի տեղեկատվություն տարածելու ուղղությամբ:

Տեղեկատվական աշխատանքի կարևոր ասպեկտներից մեկը Արցախի՝ միայն հակամարտության հետ չաղերսվող, այլ՝ անվտանգ ու խաղաղասեր, երիտասարդ ու ժողովրդավարական հանրապետության արտաքին կերպարի ամրապնդումն է: Աշխատանք կտարվի Արցախի Հանրապետության միջազգային բրենդի ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև կմշակվի Արցախի Հանրապետության մարքեթինգի երկարաժամկետ ծրագիր: Այս նպատակին կձառայեն նաև արտերկրում Արցախի պատմամշակութային ժառանգությունը ներկայացնող միջոցառումների կազմակերպումը, զբոսաշրջային և այլ տեսարժան վայրերի հանրայնացումը: Տեղեկատվական աշխատանքում կօգտագործվեն գործող և նոր տեղեկատվական ռեսուրսները, ինչպես նաև Սփյուռքի հայկական և օտարալեզու զանգվածային լրատվամիջոցների ներուժը:

Երկրի տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով համապատասխան պետական մարմինների և կառույցների կողմից կմշակվի տեղեկատվական քաղաքականության ընդհանուր ռազմավարություն՝ տեղեկատվական դաշտում ամենօրյա համակարգված և ավելի նպատակային գործունեություն ծավալելու, ինչպես նաև ճգնաժամային տարբեր հրատապության իրավիճակներում աշխատելու համար պատրաստի գործիքակազմ ապահովելու նպատակով:

Միջազգային տնտեսական համագործակցության բնագավառում աշխատանք կտարվի Արցախի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի ընդլայնման, Արցախի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ստեղծման և երկրի տնտեսության մեջ ներդրումների խրախուսման ուղղությամբ:

Օժանդակություն կցուցաբերվի արցախյան արտադրողին՝ արտադրանքն արտասահմանյան շուկաներում ներկայացնելու հարցում: Այս առումով հատուկ ուշադրություն կդարձվի արտերկրում արցախյան արտադրանքի հանրայնացմանը, այդ թվում նաև՝ օտարերկրյա առևտրատնտեսական միջոցառումներին արցախյան ընկերությունների մասնակցության միջոցով:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով արտերկրի գործարար շրջանակներին կներկայացվեն Արցախի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների կողմից մշակված բիզնես ծրագրեր, ինչպես նաև երկրի ներդրումային հնարավորություններին վերաբերող զանազան տեղեկատվական նյութեր:

Աշխատանք կտարվի օտարերկրյա կազմակերպությունների և հիմնադրամների հետ՝ Արցախում ենթակառուցվածքային, կրթական, ինչպես նաև զարգացման ծրագրեր իրականացնելու համար: Այդ նպատակով կարող են օգտագործվել նաև ապակենտրոնացված համագործակցության ընձեռած հնարավորությունները:

Կշարունակվի համագործակցությունը Արցախում գրանցված և գործող միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ՝ Արցախում մարդասիրական ծրագրերի իրականացման, ինչպես նաև հետկոնֆլիկտային վերականգնման նախագծերի, մասնավորապես, երկրի տարածքի ականազերծման հետ կապված հարցերում:

Աջակցություն կցուցաբերվի նաև միջազգային և ոչ կառավարական կազմակերպություններին, որոնք խաղաղարար, մարդասիրական, տեղեկատվական և այլ բնույթի ծրագրեր են իրականացնում Արցախում:

Հետևողական քայլեր կձեռնարկվեն՝ ընդհանուր առմամբ արտաքին քաղաքական գործունեության և, մասնավորապես, արտերկրում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Ուշադրության կենտրոնում կլինի արտերկրում Արցախի Հանրապետության ներկայացվածության աշխարհագրության ընդլայնումը և արտերկրում մշտական ներկայացուցչությունների կարգավիճակի բարձրացման մեխանիզմների մշակումը՝ հաշվի առնելով նստավայր երկրի առանձնահատկություններն ու օրենսդրական դաշտը: Դիվանագիտական ծառայության արդյունավետության բարձրացմանը կծառայի դիվանագիտական աշխատակիցների ռոտացիան, ինչը անհրաժեշտ պայմաններ կստեղծի նրանց մասնագիտական և ծառայողական աճի համար:

#### 1.4. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը հայոց անկախ պետականության գոյության կարևորագույն գրավականն է: Հայրենիք-Սփյուռք ամուր կապը հայոց պետականության և հայ ժողովրդի անվտանգության ու բնականոն զարգացման հիմնասյուներից է:

Սփյուռքի, նրա տարբեր հատվածների և կառույցների հետ սերտ համագործակցությունը, կապերի շարունակական ընդլայնումն ու խորացումն Արցախի Հանրապետության համար ունեն ռազմավարական առանցքային նշանակություն:

Սփյուռքի հետ համագործակցության կարևորագույն ուղղություններն են՝

- 1) արտաքին քաղաքականությունը.
- 2) տնտեսական ու հատկապես ներդրումային ուղղությունը.
- 3) կրթությունը, մշակույթը և սոցիալական ոլորտը.
- 4) տեղեկատվական ոլորտը.
- 5) զբոսաշրջությունը:



Ներկայումս հատուկ կարևորություն է ստանում Սփյուռքի արցախյան հատվածի հետ կայուն կապերի հաստատումն ու զարգացումը, վերջինիս ներգրավվածության խթանումը Արցախի Հանրապետության, նրա շրջանների և տարբեր բնակավայրերի շենացման գործում:

Արտաքին քաղաքական օրակարգի կարևորագույն խնդիրներից է Հայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցության հետագա ընդլայնումն ու զարգացումը, արտերկրում գործող հայկական կազմակերպությունների ջանքերի համախմբումը՝ համահայկական օրակարգային խնդիրների առավել արդյունավետ լուծման նպատակով: Հայկական Սփյուռքի էթնիկ ու մշակութային ինքնության և պատմական Հայրենիքի հետ կապերի պահպանման նպատակով աջակցություն կցուցաբերվի համատեղ երիտասարդական նախաձեռնությունների իրականացմանը, կրթական ծրագրերի և փոխադարձ այցելությունների կազմակերպմանը: Կշարունակվի աջակցությունը հայրենադարձության ծրագրերի ընդլայնմանը, միջոցներ կձեռնարկվեն հայրենադարձների իրավական կարգավիճակի հետ կապված խնդիրների լուծման համար: Ուշադրության կենտրոնում կմնա ներկայումս տարբեր երկրներում բնակվող արցախցի մեր հայրենակիցների հետ աշխատանքը՝ իրենց ծննդավայրի հետ կապերը պահպանելու և զարգացնելու նպատակով:

Կշարունակվեն ջանքերը՝ ուղղված Հայաստան-Արցախ երկկողմ հարաբերությունների պայմանագրային-իրավական բազայի կատարելագործմանը՝ երկու հայկական պետությունների ինտեգրացիոն կապերի խորացման նպատակով:

## 2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 2.1. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Պետականաշինության զարգացման ուղին տեսանելի է իրավունքի գերակայության երաշխավորմամբ իրավական պետության կառուցման մեջ, որի ամբողջական կենսագործման համար անհրաժեշտության դեպքում կիրականացվեն սահմանադրական բարեփոխումներ՝ փոխզույգման և հավասարակշռման մեխանիզմների հստակեցմամբ, որոնք կնպաստեն օրենսդրության արդիականացմանը, մարդու իրավունքների և ազատությունների առավել արդյունավետ պաշտպանությանը, դատական համակարգի մատչելիության և արդյունավետության ապահովմանը, նորարարական լուծումների միջոցով արդարադատության համակարգի նպատակների իրացմանը, օրենքի գերակայությունը ապահովող օրենսդրական դաշտի կատարելագործմանը:

Օրենսդրության արդիականացումը պայմանավորված է համակարգի առջև ծառայած մարտահրավերներին ժամանակին և արդյունավետ արձագանքելու հնարավորությամբ օժտելու հրամայականով: Օրենսդրության կատարելագործումը նպատակ ունի ապահովելու օրենքի առջև բոլորի հավասարությունը, միջազգային փաստաթղթերով նախատեսված մարդու հիմնարար իրավունքների երաշխավորումը ներպետական իրավական ակտերով, օրենքի գերակայության երաշխավորումը, օրենսդրության հստակեցումը, օրենսդրական բացերի վերհանումը, իրավական նորմերի տարբերացումների բացառումը, մարդու իրավունքների օրենսդրական ամրագրումն ու հետևողական իրացումը, սոցիալական զարգացմանը նպաստող իրավունքի գերակայության արտահայտման այլ ձևերի ամրագրումն ու կիրարկումը, իրավական ակտերի միջև հակասությունների վերացումը, նորմատիվ իրավական ակտերի կիրարկման մշտադիտարկումը: Դրան զուգահեռ կշարունակվի հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը, քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հետևողական միջոցառումների իրականացումը:

Նախատեսվում է մշակել մեխանիզմներ, որոնք կապահովեն քրեակատարողական ոլորտի սահուն փոխանցումը ոստիկանության համակարգից արդարադատության համակարգ: Դրանով պայմանավորված պետք է կատարվեն համապատասխան աշխատանքներ՝ ուղղված քրեակատարողական ծառայության ոլորտի գործունեության կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը՝ վերականգնողական արդարադատության սկզբունքների հիման վրա: Նախատեսվում են օրենսդրական բարեփոխումներ քրեակատարողական ծառայությունում, որոնց շրջանակներում կվերանայվեն ազատությունից զրկման վայրերում անձանց պահման ռեժիմները, քրեակատարողական ծառայողների արարքների ու ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմները, կներդրվի խոշտանգման կամ այլ դաժան վերաբերմունքի դեպքերի կանխարգելման համակարգ և կկատարվեն քրեակատարողական համակարգի հիմնարար այլ բարեփոխումներ:

Նախատեսվում է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ [www.arlexis.am](http://www.arlexis.am) անվճար իրավական տեղեկատվական համակարգը նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման միասնական կայք դարձնելու ուղղությամբ:

Դատական ակտերի հարկադիր կատարման բնագավառում կբարելավվի հարկադիր կատարման գործընթացը, հարկադիր կատարման համակարգում կկատարվեն համապատասխան ուսումնասիրություններ, վեր կհանվեն օրենսդրական բացերը, կհստակեցվեն հարկադիր կատարման ժամկետները՝ բացառելով հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունները:

Բացահայտված իրավական խնդիրների հաղթահարմանն ուղղված նոր իրավական լուծումներով հարկադիր կատարման գործընթացը կդառնա առավել հստակ՝ նպաստելով անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ դատական պաշտպանության ապահովմանը: Աշխատանքներ կիրականացվեն հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից փաստաթղթաշրջանառությունը մեծապես էլեկտրոնային եղանակով իրականացնելու ուղղությամբ: Նախատեսվում են մի շարք փոփոխություններ՝ ուղղված հարկադիր կատարման ծառայության կողմից

հայցի ապահովման նպատակով իրականացվող գործողությունների կանոնակարգմանը:

Դատական փորձաքննությունների բնագավառում կշարունակվի օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննությունների կատարման ծառայության մատուցումը ինչպես պետության կարիքների համար՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների և դատարանների որոշումների հիման վրա, այնպես էլ իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ նրանց դիմումների կամ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կողմի միջնորդությամբ դատարանի կողմից կայացված որոշման հիման վրա: Համապատասխան աշխատանքներ կտարվեն դատական փորձաքննության բնագավառում տարբեր մասնագիտություններով նոր կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ:

Դատաիրավական համակարգում դատարանների և դատական իշխանության լիակատար անկախության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել օրենսդրական ու գործնական բարեփոխումներ դատական համակարգում, վեր հանել դատական իշխանության և իրավական համակարգի պրակտիկայում առկա խնդիրները՝ նպաստելով դատական համակարգի արդյունավետության, հեղինակության և դատարանների հանդեպ հասարակության վստահության բարձրացմանը:

Կիրականացվեն դատական տեղեկատվական էլեկտրոնային կառավարման և տեղեկության տրամադրման «DataLex» համակարգի ներդրման հնարավորության ուսումնասիրման և, հնարավորության դեպքում, ներդրման աշխատանքներ:

## 2.2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետագա զորացումը կնպաստի մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների, այդ թվում՝ սեփականության, աշխատանքային, առողջության պահպանման, սոցիալական ապահովության, ընտրական, արդար դատաքննության, անձնական ազատության, պատշաճ վարչարարության, տեղեկություններ ստանալու, խոշտանգման արգելքի իրավունքների, ինչպես նաև երեխաների, տարեցների, զինծառայողների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, ազատությունից զրկված անձանց, հանրային

ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության կայացման ոլորտներում բարեփոխումների իրականացմանը՝ ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումներին և առաջարկություններին համապատասխան:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, ի լրումն տարբեր ոլորտներին առնչվող հատվածներում ներկայացված մի շարք բարեփոխումների, նախատեսվում է՝

1) մշակել և գործարկել մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարություն՝ որպես բնագավառում գործադիր իշխանության ընդհանուր քաղաքականությունն ամրագրող ռազմավարական փաստաթուղթ, որից էլ պետք է բխեն գործողությունների համապատասխան ծրագրերը.

2) Արցախի և Հայաստանի Հանրապետությունների միջև ներդաշնակեցնել այն իրավահարաբերությունները, որոնցում առկա խզումները հանգեցնում են մարդու իրավունքների խախտումների կամ սահմանափակումների.

3) միանալ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա միջազգային մի շարք հիմնարար փաստաթղթերի՝ դրանք դարձնելով ներպետական իրավունքի մաս և հիմք տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների համար.

4) ակտիվորեն աջակցել քաղաքացիական հասարակության կայացման գործընթացին՝ տրամադրելով ծրագրային ու մրցութային դրամաշնորհներ և նպաստելով դաշտում համապատասխան կարողությունների շարունակական զարգացմանը:

### 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

#### 3.1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պետական կառավարման ոլորտում նախատեսվում են բարեփոխումներ՝ ուղղված կադրերի ընտրության, վերապատրաստման, աշխատանքի կազմակերպման ու գնահատման, առաջխաղացման մեխանիզմների արդյունավետության, հաշվետվողականության և արդարության մակարդակի բարձրացմանը: Պետական կառավարումը պատշաճ մակարդակի և նոր որակի բերելու համար նախատեսվում է՝

1) պետական կառավարման մարմինների արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների մշակում.

2) բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում «մեկ կանգառ՝ մեկ պատուհան» սկզբունքի ներդրմամբ.

3) հնարավոր բոլոր գործառույթների ու գործընթացների թվայնացում, ներառյալ՝ փաստաթղթաշրջանառությունը, աշխատանքի կազմակերպումը և քաղաքացիների սպասարկումը.

4) կադրային քաղաքականության մշակում և ներդնում (ազգային մտավոր ներուժի իրացում, մարդկային ռեսուրսների և աշխատանքի արդյունավետ կառավարում, կադրային բանկի հիմնում):

Պետական բոլոր մարմիններից ու պաշտոնյաներից պահանջվելու է իրենց գործունեության մեջ առաջնորդվել ոչ միայն օրենսդրությամբ, այլև հետևյալ հիմնական սկզբունքներով՝

1) պաշտոնավարումը ծառայություն է ժողովրդին: Յուրաքանչյուր պաշտոնյա պետք է գիտակցի, որ ինքը ծառայում է ժողովրդին ու հայրենիքին. ուստի, բոլորի վարքը պետք է համապատասխանի ծառայության էությանն ու նպատակին: Ոչ մի պաշտոնատար անձ չպետք է իրեն տեր զգա քաղաքացիների հետ շփումներում.

2) ամեն ինչ՝ առաջին հերթին հայրենիքի անվտանգության համար: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր պաշտոնյա և յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ոչինչ չխնայել հայրենիքի անվտանգության ապահովման գերնպատակին հասնելու համար, և զինված ուժերի կարիքները պետք է բոլորի առաջնային հոգածության ներքո լինեն.

3) պետական միջոցների հանդեպ առավելագույն սրտացավությունը՝ կոռուպցիայի կանխարգելման գլխավոր նախապայման: Խստիվ դատապարտելի են կոռուպցիոն երևույթները և պետական գույքի ու միջոցների հանդեպ ոչ սրտացավ վերաբերմունքը: Պետական ծառայողը պետք է մեկընդմիջտ հանի իր հոգեկերտվածքից այն կարծրատիպը, որ պետական գույքը ստորադասվում է սեփական գույքի նկատմամբ: Իրականությունը պետք է հակառակը լինի. պետական, այսինքն՝ հանրության գույքը գերակա է սեփական գույքի հանդեպ, և բոլորի մոտ այդ գերակա վերաբերմունքը պետք է գերիշխի: Նաև այդ կարծրատիպից են բխում կոռուպցիոն բազմաթիվ դրսևորումներ, ինչը նշանակում է, որ խնդիրների հիմնական լուծումը հավաքական ու անհատական հոգեկերտվածքի մեջ է:

Եվ պետական շահերի պաշտպանության հարցում առաջամարտիկները պետք է լինեն պետական պաշտոնատար անձինք: Խստություն և հետևողականություն է ցուցաբերվելու նման դեպքերի կանխարգելման, բացահայտման ու պատժման հարցում. ոչ մի ներում չի լինելու հատկապես դիտավորությամբ կատարված նման հանցագործությունների նկատմամբ.

4) ներառականությունը՝ ցանկացած ծրագրի հիմքում: Պետական բոլոր ծրագրերը կլինեն ներառական և հասցեական: Ցանկացած ծրագրի մշակման ու իրագործման բոլոր փուլերում պետք է ընդգրկված լինեն բոլոր շահագրգիռ կողմերն ու խմբերը: Հարկ է արդյունավետ ընթացակարգեր ու մեխանիզմներ գործարկել ու կիրառել հանրության հետ երկկողմանի հաղորդակցության ապահովման համար, ներառյալ՝ հանրային քննարկումների ու էլեկտրոնային փոխներգործուն մեխանիզմների միջոցով.

5) գործունեությունն ու ծառայությունները՝ թափանցիկ ու մատչելի: Յուրաքանչյուր պետական մարմնի ու պաշտոնատար անձի գործունեությունը պետք է լինի հնարավորինս թափանցիկ, հաշվետվողական ու մատչելի: Այդ համատեքստում խիստ կարևորվում է պետական վարչարարության առավելագույն թեթևացումն ու մատչելիությունը, որի առաջնային ուղղություններից մեկը, հատկապես ներկա մարտահրավերների պայմաններում, բոլոր հնարավոր ծառայությունների ու փաստաթղթերի շրջանառության արագ թվայնացումն է.

6) օրենքները հավասարապես բոլորի համար են, բացառությունները՝ նույնպես: Կարգուկանոնը և օրենքի առջև հավասարությունը պետք է տիրեն ողջ Հանրապետությունում: Օրենքի գերակայությունը պետք է գործի անվերապահորեն: Ցանկացած անձի վաստակն ու արտոնությունները պետք է լինեն ոչ թե լրացուցիչ իրավունքների, այլ՝ պարտականությունների աղբյուր.

7) յուրաքանչյուր հանրային ծառայող մարդու իրավունքների պաշտպան է: Մարդու իրավունքների պաշտպանությունն առաջնահերթություն է, քանի որ պետության ցանկացած գործառույթ, վերջիվերջո, հանգում է մարդուն ծառայելուն և պաշտպանելուն.

8) արժանիքահեն մարդկային ռեսուրսների կառավարում՝ զարգացնող միջավայրում: Պետական պաշտոնյան պարտավոր է պարբերաբար զարգացնել կառավարման հմտություններն ու գիտելիքները, ցուցաբերել արժանիքահեն ու արդար մոտեցում կադրերի ընտրությանը,

ստեղծել խրախուսող ու զարգացնող միջավայր, որտեղ կիրացվի յուրաքանչյուր հանրային ծառայողի առավելագույն ներուժը հանուն հայրենիքի անվտանգության ու զարգացման.

9) ներդաշնակ ու նախաձեռնողական աշխատանք՝ թիմային ոգով: Պահանջվում է, որ համագործակցային ու թիմային ոգին տիրի պետական մարմինների համատեղ աշխատանքում: Ներդաշնակությունը պարտադիր պայման է պետական համակարգի աշխատանքում, և անընդունելի են միջգերատեսչական հակասություններն ու այն դեպքերը, երբ մի ձեռքը չգիտի, թե ինչ է անում մյուս ձեռքը: Կարևորվում է նաև նախաձեռնողականությունը. հանրային ծառայողները պետք է նախաձեռնող լինեն հանրության հիմնախնդիրների լուծման գործում՝ բնականաբար, պահելով համագործակցային ոգին.

10) համազգային ջանքեր՝ համազգային պատասխանատվությամբ: Արցախը մեկ միասնական հայկական աշխարհի անբաժանելի մասնիկն է: Յուրաքանչյուր պետական պաշտոնյա պետք է գիտակցի դրանից բխող հնարավորությունն ու պատասխանատվությունը՝ հետևողականորեն ամրապնդելով Մայր Հայաստանի և Սփյուռքի հետ համագործակցությունն ու ինտեգրացիայի աստիճանը, ներգրավելով բոլոր հնարավոր ջանքերն ու ռեսուրսները: Համազգային պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն հայոց միացյալ հայրենիքի անվտանգությունը և համազգային արժանապատվությունն առաջնագծում պահելով, փոխարենը՝ պետք է կիսվի նաև պատասխանատվությունը համազգային բոլոր խնդիրների լուծման համար:

Պետական կառավարման համակարգի գործունեությունն ուղղված կլինի պետական կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացմանը, որը կլինի շատ ավելի մեծ, քան առանձին բնագավառների անհատական արդյունավետության մեխանիկական հանրագումարը:

Պետական գույքի կառավարման ոլորտում նախատեսվում է՝

1) պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման տրամադրման ծրագրային կառավարման բարեփոխում.

2) պետական գույքի մասնավորեցման, օտարման, վարձակալության, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցում,



վարչարարության կրճատում, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում.

3) պետական գույքի գրավչությունը և վաճառքի խթանումն ապահովելու համար պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացում առավել գործուն և արդյունավետ գործիքակազմի կիրառում.

4) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացում.

5) պետական գույքի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրում.

6) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բնագավառում արդյունավետ գործիքակազմի կիրառում՝ կոնցեսիոն և հավատարմագրային կառավարման հանձնելու նպատակով.

7) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքներից ելնելով պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրում:

Անշարժ գույքի պետական կադաստրի ոլորտում նախատեսվում է՝

1) անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցության շարունակականության ապահովում.

2) գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների, գեոդեզիայի և քարտեզագրության տեղեկատվական համակարգերի ստեղծում, տվյալների մատչելիության, օբյեկտիվության և անընդհատության ապահովում.

3) պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և պետական արխիվի բնագավառներում նախատեսվում է շարունակել թվայնացման աշխատանքները՝ ուղղված քաղաքացիներին մատուցվող ծառայությունների պարզեցմանը:

Նոտարիատի բնագավառում կիրականացվեն e-notary էլեկտրոնային համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքներ, որոնց արդյունքում կընդլայնվի էլեկտրոնային եղանակով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների շրջանակը, կստեղծվի նաև առցանց եղանակով նոտարին որոշակի հարցումներ ուղարկելու հնարավորություն:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բնագավառում ավարտին կհասցվի էլեկտրոնային եղանակով՝ e-register.am կայքում, իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումներն ու հաշվառումները, նախկինում գրանցված (հաշվառված) սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տեղադրման աշխատանքները:

Կգործարկվի Արցախի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային [www.azdararnkr.am](http://www.azdararnkr.am) կայքը, կներդրվի հայտարարությունների տրամադրման առցանց էլեկտրոնային համակարգ:

Ազգային վիճակագրական համակարգի կարողությունների ամրապնդման և վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործմանը զուգընթաց՝ կշարունակվեն ներկայում գործող վիճակագրական հաշվառման ու դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով երաշխավորել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության ապահովումը, ինչպես նաև հնարավորին չափ նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը: Այս առումով կարևորում է ԱՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով հավաքագրվող որոշակի տվյալների ստացման ճանապարհով ռեսպոնդենտներից դրանք չհավաքագրելը: Ավարտին կհասցվեն գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները:

### 3.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում կձեռնարկվեն բարեփոխումներ՝ ուղղված իրավական դաշտը Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանեցնելուն, մարմինների կառավարման կարողությունների ու մոտեցումների զարգացմանը և գործունեության արդյունավետության ու հանրության առջև հաշվետվողականության աստիճանի բարձրացմանը: Այս առումով կարևորվում են «Արցախի Հանրապետության վարչատարածքային

բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» Արցախի Հանրապետության նոր օրենքների նախագծերի մշակումը և ընդունումը՝ համապատասխան նոր ենթաօրենսդրական դաշտերի ձևավորմամբ:

Կիրականացվեն տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Կմեկնարկի Արցախի Հանրապետության տարածքային կառավարման մարմինները՝ ներկայում գործող շրջանների սահմաններում, տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի) վերափոխման գործընթացը:

Նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքներում նախատեսվում է ներդնել վարչական ղեկավարների ինստիտուտը, որը բնակավայրերում իրականացնելու է համայնքի ղեկավարի գործառույթների զգալի մասը:

Համայնքային ծառայության համակարգի ներդրմամբ նախատեսվում է նոր ձևավորված համայնքների աշխատակազմերում առավել կանոնակարգված դարձնել աշխատանքային հարաբերությունները, բարձրացնել համայնքային ծառայողների մասնագիտական որակների աստիճանը, ինչպես նաև համայնքային ծառայողների համար սահմանել որոշակի սոցիալական երաշխիքներ:

Նախատեսվում է նաև տարածքային կառավարման մարմինների (շրջանների վարչակազմերի) լիազորությունների գերակշիռ մասը պատվիրակել նոր ձևավորված տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես պետության պատվիրակած լիազորություններ:

Պետական կառավարման մարմինների և հասարակության միջև կապի ամրապնդման նպատակով նախատեսվում է հանրապետության բոլոր շրջաններում ստեղծել հանրային ընդունարաններ, որտեղ իշխանության ներկայացուցիչների կողմից պարբերաբար կիրականացվեն քաղաքացիների ընդունելություններ:

Տարածքային կառավարման մարմիններին վերապահված գործառույթներից՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության իրավասությունը վերապահվելու է Արցախի Հանրապետության կառավարության սահմանած իրավական հսկողության բարձրագույն մարմնին:

### 3.3. ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնական պաշարների կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը միտված է լինելու՝

1) բնօգտագործման նկատմամբ պետական և հանրային խիստ վերահսկողության ապահովմանը.

2) անտառների ապօրինի հատումների կանխմանը, նոր անտառների, կանաչապատ տարածքների հիմնմանը, կենսաբազմազանության պահպանմանը.

3) մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մշտադիտարկմանը, պահպանմանը և արդյունավետ կառավարմանը.

4) անտառների գնահատման իրականացմանը, անտառակառավարման արդյունավետ մեթոդների կիրառմանը, անտառային ֆոնդի որակական ու պաշտպանական հատկանիշների բարելավմանը:

Բնօգտագործման ոլորտում առանձնահատուկ կարևորություն է տրվելու ընդերքօգտագործման բնագավառին, որը ռազմավարական նշանակություն ունի աշխատատեղերի և տնտեսական ակտիվության ապահովման տեսանկյունից: Ընդերքօգտագործման բնագավառի հետագա զարգացման, ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործման, ինչպես նաև մասնավոր ներդրումների աճի ապահովման նպատակով իրականացվելու են ծրագրեր ու միջոցառումներ ուղղված՝

1) Արցախի Հանրապետության տարածքում ընդերքի ռեսուրսային և տնտեսական ներուժի գնահատմանը.

2) օգտակար հանածոների հանքավայրերի որոնմանը, հետախուզմանն ու գնահատմանը.

3) երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հավաստիության ապահովման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիաների ստեղծմանը:

Բնօգտագործման բնագավառներում գլոբալ և տարածաշրջանային խնդիրների լուծումը հնարավոր է միայն համատեղ ուժերով, այդ իսկ պատճառով կիրականացվեն Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության ծրագրեր, այդ թվում՝ մասնագետների ներգրավման և կադրերի վերապատրաստման ուղղությամբ:

Մարդու և բնության ներդաշնակ գոյակցության, ինչպես նաև երկրի երկարաժամկետ և կայուն զարգացման կարևոր երաշխիքը շրջակա միջավայրի և բնական պաշարների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումն է:

Հանրապետությունում տնտեսական զարգացումը թելադրում է բնական ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումներ՝ նպատակաուղղված բնական ռեսուրսների պահպանությանը, զարգացմանը, արդյունավետ օգտագործմանը, նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը և համապատասխան ծրագրերի ու միջոցառումների իրականացմանը՝ առաջնահերթ և անհրաժեշտ լուծումներ պահանջվող ջրային ռեսուրսների, կենդանական աշխարհի, թափոնների և մթնոլորտային օդի կառավարման, էկոլոգիական իրավիճակի վերահսկման, էկոլոգիական կրթության և դաստիարակության ուղղություններով: Ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում նախատեսվում է՝

1) մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակի մասին ամբողջական պատկեր ունենալու համար շարունակել մակերևութային և ստորերկրյա ջրերի մշտադիտարկումը՝ օգտագործելով արդիական սարքավորումներ և մասնագիտական հնարավորություններ, ինչպես նաև մշակել ծրագրեր ի հայտ եկած խնդիրների լուծման ուղղությամբ:

2) ճշտել ջրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների արդիական բնութագրերը, այդ թվում՝

ա. մակերևութային բնական վերականգնվող հոսքի քանակական և որակական տարածաժամանակային բնութագրերի ճշգրտում՝ հաշվի առնելով վերջին տասնամյակների ընթացքում քանակական և որակական մշտադիտարկման տվյալների բացակայությունը, հոսքի վրա կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունները,

բ. մակերևութային և ստորերկրյա ջրային պաշարների տարանջատված գնահատման հստակեցում, խորքային հոսքի ճշգրտում,

գ. ստորերկրյա ջրային ռեսուրսների հանքավայրերի շահագործական պաշարների ճշգրտում և թույլատրելի (հնարավոր) ջրառի տեղաբաշխման որոշում:

Կենդանական աշխարհի պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում նախատեսվում է՝

1) իրականացնել Արցախի Հանրապետության կենդանական աշխարհի վերարտադրության, պահպանության, օգտագործման և մշտադիտարկման գործառույթներ, ինչպես նաև այդ ոլորտը կարգավորող օրենսդրության արդիականացում:

2) հատուկ պահպանվող տարածքներում իրականացնել կենդանական աշխարհի ուսումնասիրություններ, մշակել ծրագրեր անհետացման եզրին գտնվող և որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների գլխաքանակի ավելացման ուղղությամբ, կատարել ուսումնասիրություններ և ստեղծել պայմաններ որսորդական տնտեսությունների հիմնադրման և հետագայում շահավետ գործունեություն ծավալելու նպատակահարմար դառնալու ուղղությամբ, որը նույնպես կնպաստի ապօրինի որսորդության կանխարգելմանը, ինչպես նաև արդիական պահանջներին համապատասխան կձևավորվի սիրողական որսի նոր մշակույթ:

3) պարբերաբար իրականացնել հասարակական լսումներ և խթանել քաղաքացիական հասարակության ակտիվ ընդգրկվածությունը հատուկ պահպանվող տարածքների ռացիոնալ օգտագործման ու համապատասխան ծրագրերի մշակման գործընթացներում:

Թափոնների և մթնոլորտային օդի կառավարման բնագավառում առկա խնդիրների լուծումը ներկա ժամանակի պահանջներին համահունչ իրականացնելու նպատակով նախատեսվում է՝

1) ավարտել Արցախի Հանրապետության տնտեսության մեջ գոյացող թափոնների անձնագրերի կազմման աշխատանքները և մշակել համայնքների կոշտ կենցաղային թափոնների հեռացման, տեղափոխման ու տեղադրման համապատասխան ծրագրեր:

2) ապահովել մթնոլորտային օդի ուսումնասիրության ու մշտադիտարկման իրականացման մեկնարկած ծրագրի շարունակական ընթացքը, ինչպես նաև իրականացնել վերլուծություն և ստեղծել համապատասխան տեղեկատվական բազա՝ հետագա աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար:

3) ուժեղացնել մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների արտանետումների, թափոնների հեռացման, տեղափոխման և տեղադրման գործառույթների վերահսկողությունը, այդ գործում ներգրավել Հայաստանի Հանրապետությունից համապատասխան մասնագետների, ինչպես նաև ձեռք

բերել տվյալ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ:

Բնապահպանական իրավիճակի վերահսկման բնագավառում նախատեսվում է՝

1) ուժեղացնել պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների պահպանման նկատմամբ.

2) ապահովել անտառների ապօրինի հատումների կանխումը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը, ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումների նվազեցումը.

3) ուժեղացնել ընդերքի շահագործման, ինչպես նաև բնական պաշարների վերականգնման ու վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը.

4) մշտապես ուշադրության կենտրոնում պահել բնական միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարումը.

5) մշակել և կիրառել նոր մոտեցումներ հասարակության բնապահպանական իրազեկման բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում:

Բնապահպանական ոլորտի զարգացման գերակայությունները հիմնվելու են հետևյալ առանցքային հիմնադրույթների վրա՝

1) բնապահպանական քաղաքականության օրենսդրական դաշտի կատարելագործում և արդիականացում.

2) բնապահպանական և բնօգտագործման վճարների, ինչպես նաև բնապահպանության ոլորտում պատասխանատվության և վնասի փոխհատուցման համակարգերի կատարելագործում.

3) բնապահպանական կառավարման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնում, վարչարարության կատարելագործմանը զուգընթաց բնապահպանական գործունեության, էներգախնայողության և ռեսուրսախնայողության խրախուսման մեխանիզմների զարգացում.

4) աղբահանության համակարգի ծրագրի ներդրման համար տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցության ցուցաբերում.

5) լքված, կոնսերվացված հանքավայրերի, ոչ մետաղական և մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված (տիրագուրկ) արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում:

6) լեռնահանքային արդյունաբերության հետ կապված հողերի աղտոտման բացառման ուղղությամբ վերահսկողության իրականացում:

7) ջրային ռեսուրսների մշտադիտարկում, ջրային կադաստրի ստեղծում:

8) փոքր հեկտերի մշտադիտարկում՝ ջրօգտագործման ժամանակ ջրաէկոհամակարգի պահպանությունը և հավասարակշռությունն ապահովելու նպատակով:

9) մթնոլորտային օդի վիճակի մշտադիտարկման ցանցի ստեղծում՝ մթնոլորտային օդի որակի հսկողություն իրականացնելու համար:

Բնապահպանական կրթության և դաստիարակության մակարդակի բարձրացման նպատակով՝

1) կրթության համակարգի բոլոր մակարդակներում կկազմակերպվեն բնապահպանական ուղղվածությամբ միջոցառումներ:

2) կկազմակերպվեն կլոր սեղաններ, սեմինարներ, միջոցառումներ՝ նվիրված միջազգային բնապահպանական օրերին:

3) նախադպրոցական համակարգի երեխաների համար կմշակվեն և կիրականացվեն բնապահպանական միջոցառումների ծրագրեր, կնախապատրաստվեն տեղեկատվական նյութեր:

4) կիրականացվի բնապահպանական տեղեկատվության տարածում՝ ինտերնետային կայքերի, տեղեկատվական այլ խողովակների միջոցով:

5) կիրականացվեն երիտասարդական էկոլոգիական ճամբարների ստեղծման (գյուղական համայնքներում), հանրային արշավների կազմակերպման հնարավորությունների հետազոտում և համապատասխան ծրագրերի մշակում:

#### 3.4. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պետական եկամուտների բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված կլինի տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության



մակարդակի բարելավմանը՝ ստեղծելով կայուն նախադրյալներ երկարաժամկետ տնտեսական զարգացման, արտահանման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Այս նպատակների իրականացման տեսանկյունից կարևորվում է ներդրողների համար արդար, ընկալելի, կայուն ու կանխատեսելի միջավայրի ձևավորումը, այդ թվում՝ ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության սահմանում: Այդ առումով, էական ազդեցություն կունենա հասարակության լայն շերտերի ներգրավմամբ հարկային օրենսգրքի մշակումն ու ներդնումը:

Տնտեսության մրցունակության բարձրացման և փոքր ու միջին սուբյեկտների հարկային բեռի թեթևացման ուղղությամբ նախատեսվում է՝

1) հարկային նոր օրենսգրքի մշակում ու ներդնում.

2) ակցիզային հարկի դրույքաչափերի ու սպիրտային խմիչքների նվազագույն գների վերանայում.

3) COVID-19 համավարակով պայմանավորված գործունեության որոշ տեսակների մասով հաստատագրված վճարների չափերի վերանայում՝ դրանք համարժեք դարձնելով տնտեսավարող սուբյեկտների եկամուտների մեծությանը.

4) էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու շահագործումը խթանելու նպատակով հարկման նպաստավոր պայմանների ստեղծում.

5) տնտեսության ստվերային հատվածի հետևողական բացահայտում ու կրճատում:

Հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է՝

1) ընդլայնել կամերալ ուսումնասիրությունների իրականացման էլեկտրոնային համակարգի շրջանակները.

2) հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով կենտրոնացնել հարկային համակարգում իրականացվող վերլուծական աշխատանքները՝ ներդնելով ռիսկերի կառավարման և մշտադիտարկման համակարգ.

3) շարունակական աշխատանքներ իրականացնել տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման, աշխատողների և աշխատավարձերի ձևակերպման ուղղությամբ.

4) փուլային կարգով ներդնել նոր սերնդի հսկիչ-դրամարկղային

մեքենաներ, ինչը հնարավորություն կտա արձանագրել հարկ վճարողների իրական շրջանառությունը՝ սահմանելով արդյունավետ հսկողություն:

5) աշխատանքներ տանել խոշոր բիզնեսի լիարժեք և ժամանակին հարկման ապահովման նպատակով՝ թույլ չտալով ապառքների կուտակում:

6) ընդլայնել և կատարելագործել հարկային հաշվետվությունների ու տեղեկությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորությունները:

7) զարգացնել հարկ վճարողների պարտավորությունների հաշվառման ավտոմատացված համակարգի կարողությունները՝ հարկ վճարողների համար հարկային պարտավորությունների առցանց դիտման հնարավորության ստեղծմամբ:

8) ներդնել էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման համակարգ, ինչի արդյունքում էականորեն կբարձրանա տնտեսությունում գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողական միջոցառումների արդյունավետությունը՝ զգալի չափով դյուրինացնելով և կրճատելով փաստաթղթաշրջանառությունը:

9) հանրապետության տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառումն իրականացնել ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ կատարելագործելով հաշվառման գործառույթները:

Հարկ վճարողների հետ համագործակցության բնագավառում շարունակական առաջընթացի ապահովման, հասարակությանը հարկային վարչարարության կազմակերպման գործընթացներում ներգրավման և հարկ վճարողների իրազեկումից դեպի կրթմանն անցնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

1) ձեռնարկել միջոցներ հարկ վճարողների ուսուցման համակարգի շարունակական կատարելագործման ուղղությամբ, այդ թվում՝ առցանց հարթակի միջոցով:

2) համակարգի գործունեության թափանցիկության ապահովման շրջանակներում՝

ա. հասարակությանը ներգրավել իրականացվող հարկային բարեփոխումների գործընթացներում, այդ թվում՝ պարբերաբար հանդիպումներ, կարծիքների փոխանակումներ կազմակերպել

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, տնտեսության տարբեր ոլորտների մասնագետների, ինչպես նաև ուսանողության հետ,

բ. հասարակության գնահատականների ստացման նպատակով կազմակերպել հարկային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ՝ ինտերնետային կայքի միջոցով.

3) առանձնակի ուշադրության կենտրոնում պահել հարկային ծառայողների վարքագիծը՝ պարբերաբար կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային հմտությունների շարունակական զարգացման, հարկ վճարողների հետ պատշաճ հաղորդակցման կանոնների տիրապետման և էթիկայի նորմերի պահպանման նպատակով:

Բյուջետային և ֆինանսական շուկաների զարգացման քաղաքականությունն առաջիկա տարիներին միտված կլինի տնտեսական զարգացման խթանմանը և տնտեսությունում առկա աճի ներուժի աստիճանական բարձրացմանը, ինչը կնպաստի սոցիալական խնդիրների առավելագույնս լուծմանը և հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Կարևորելով պետական ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը՝ նախատեսվում է թիրախավորել պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի քանակական և որակական արդյունքների գնահատումը, ինչպես նաև ուժեղացնել ֆինանսական կարգապահությունը:

Նշված նպատակներին հասնելու համար աշխատանքներ կիրականացվեն հետևյալ ուղղություններով՝

1) կնախագծվի բյուջետային շրջանակ միջնաժամկետ ժամանակահատվածի համար, որը կնախատեսի կապիտալ ծախսերի աստիճանական ավելացում՝ հնարավորինս չափավորելով ընթացիկ ծախսերը և առավելապես կարևորելով դրանց արդյունավետությունը սոցիալական կարիքների ապահովման տեսակետից խնդիրներ չառաջացնելու նպատակադրմամբ.

2) մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և արտաքին աուդիտորական գործունեության ոլորտներում նախատեսվում է մշակել օրենսդրական փաթեթ՝ ուղղված հաշվապահական հաշվառման և

աուդիտի ոլորտների բարեփոխմանը: Որակյալ աուդիտը պետք է դառնա մրցունակ ձեռնարկատիրական գործունեության պահանջված նորմ՝ աուդիտորական ծառայությունների որակի հսկման գործուն համակարգի ստեղծման առկայության պայմաններում.

3) պետական ֆինանսական կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է՝

ա. ընդլայնել պետական գնումների ոլորտում մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը,

բ. իրականացնել աշխատանքներ ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ՝ ամբողջականացնելով դրա մեթոդաբանական հենքը,

գ. պետական և համայնքների բյուջեների կատարման գործընթացի կազմակերպման և նախնական հսկողության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով շարունակել գանձապետական համակարգի արդիականացմանն ուղղված աշխատանքները,

դ. ավարտին հասցնել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրման աշխատանքները,

ե. բարձրացնել պետական մարմինների բյուջետային կարգապահության ու պատասխանատվության աստիճանը և պետական ֆինանսական հսկողության մակարդակը,

զ. բարձրացնել պետական ֆինանսների կառավարման գործառույթների ավտոմատացման մակարդակը:

Հեռանկարային կայուն տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից էական է ֆինանսական շուկաների զարգացվածությունն ու խորությունը, որը հնարավորություն կտա առավել բազմազան դարձնելու և զարգացնելու ֆինանսական գործիքները՝ միաժամանակ ֆինանսական ռեսուրսներն ավելի հասանելի դարձնելով ներդրումների համար:

Կարևորելով ապահովագրական համակարգի դերը ֆինանսական շուկայի կայացման, ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցման արդյունավետ մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև առողջապահական ծառայությունների մատչելիության և այլ սոցիալական խնդիրների լուծման գործում՝ կիրախուսվի ապահովագրական ծառայությունների հետագա զարգացումը և ընդլայնումը:

#### 4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,

##### 4.1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անկախ տարիքից, սոցիալական վիճակից, տեղաշարժվելու ունակությունից և բնակության վայրից, բուժհաստատության սեփականության ձևից և գտնվելու վայրից՝ որակյալ, արդյունավետ, թափանցիկ և հասանելի առողջապահական համակարգ ունենալու նպատակով իրականացվելու են հետևյալ հիմնական քայլերը՝

1) հետևողական ջանքեր կգործադրվեն COVID -19 վիրուսի տարածման կանխարգելման, վարակակիր անձանց բացահայտման, մեկուսացման ու բուժման ուղղությամբ՝ զուգահեռաբար ավելացնելով անհրաժեշտ ենթակառուցվածքների, սարքավորումների ու այլ պարագաների ծավալները և բարելավելով առողջապահական համակարգի համապատասխան կարողությունները.

2) կշարունակվի Արցախի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ամբողջական ներդրման գործընթացը, որն ապահովելու է Արցախի Հանրապետության յուրաքանչյուր բնակչի վերաբերյալ լիարժեք բժշկական տեղեկատվություն՝ միասնական և ամբողջական ձևաչափով.

3) նախատեսվում է պետպատվերի շրջանակների ընդլայնում բոլոր քաղաքացիներին մատուցվող տարբեր բժշկական ծառայությունների համար մինչև 100 տոկոս՝ ընդգրկելով նաև թանկարժեք և նորագույն տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունները.

4) Արցախի Հանրապետությունում չիրականացվող բժշկական ծառայությունների համար փոխհատուցումը կսահմանվի մինչև 100 տոկոսի չափով.

5) կիրագործվի կյանքի և առողջության բժշկական ապահովագրության պիլոտային ծրագիր՝ զուգահեռաբար կատարելով ուսումնասիրություններ պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման հնարավորությունների շուրջ.

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին հիվանդի ընտրելու իրավունքը լիարժեք իրացնելու

նպատակով նախատեսվում է անկախ բնակության վայրից քաղաքացու համար ստեղծել հնարավորություն՝ ընտրելու բժշկին էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով.

7) առողջության առաջնային պահպանության ժամանակակից համակարգի հիմնում՝ արտահիվանդանոցային պայմաններում բուժվող հիվանդությունները կանխարգելելու, հայտնաբերելու և բուժելու նպատակով:

Նախատեսվում է մի շարք ոչ վարակիչ հիվանդությունների վաղ շրջանում հայտնաբերման ու կանխարգելման նպատակով Արցախի Հանրապետությունում ներկայումս պետական պատվերի շրջանակներում իրականացվող սկրինինգային ծրագրերին ավելացնել նաև վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտությունը և թիրեոթրոպ հորմոնի որոշումը սկրինինգային եղանակով, ինչպես նաև տղամարդկանց միզապարկի քաղցկեղի վաղ հայտնաբերման սկրինինգը՝ պոլիմերիզային շրթայական ռեակցիայի հետազոտության եղանակով:

Նախատեսվում է դպրոցականների շրջանում պետական ֆինանսավորմամբ իրականացվող միջոցառումների ցանկը լրացնել հետևյալ միջոցառումներով՝

ա. տարրական դասարանների աշակերտների մոտ սակավարյունության, անբավարար սնուցման ու փարթամության կանխարգելման նպատակով դպրոցական նախաճաշով (անվճար առողջ սննդով) նրանց ապահովումը,

բ. առողջ ապրելակերպի (անվճար առողջ սննդի, ֆիզիկական առողջության, վնասակար սովորություններից զերծ մնալը և այլն) խրախուսումը և դասընթացների կազմակերպումը դեռահասների շրջանում,

գ. սկրինինգային ծրագրերի ներդնում՝ մկանակմախքային (սկոլիոզի), տեսողության խանգարումների վաղ հայտնաբերման և միզասեռական հիվանդությունների հայտնաբերման համար,

8) կշարունակվի Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների և տարբեր բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ ինչպես պետական աջակցությամբ, այնպես էլ բարեգործական հիմունքներով, համակարգի բժիշկ-մասնագետների՝ Հայաստանի Հանրապետության ու արտասահմանյան տարբեր երկրների առաջատար կլինիկաներում պարբերաբար վերապատրաստման

գործընթացը, ինչպես նաև արտագնա դասընթացների և գիտաժողովների կազմակերպումը բժիշկների և միջին բուժաշխատողների համար.

9) կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ շրջանային բուժմիավորումներում առկա համապատասխան մասնագետների և սարքավորումների պակասը հագեցնելու համար. Շարունակական կլինի նաև 2019 թվականից իրականացվող շրջանների բուժհաստատություններ ուղեգրված նորավարտ բժիշկների սոցիալական պայմանների բարելավման ծրագիրը, ինչպես ամենամսյա լրացուցիչ ֆինանսական աջակցության, այնպես էլ բնակարանի վարձավճարի փոխհատուցման տեսքով.

Ներկայումս Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում ուսանում է 190 արցախցի ուսանող, որոնց հետ կնքվել են պայմանագրեր՝ Արցախի Հանրապետության շրջանային բուժմիավորումներում և գյուղական բնակավայրերում 3-5 տարի ժամկետով աշխատելու պարտադիր պայմանով: Մինչև 2025 թվականը 190 ուսանողից ուսումը կավարտի և աշխատանքի կանցնի 149 բժիշկ՝ տարբեր մասնագիտություններով:

Միաժամանակ նախատեսվում է շրջանային բուժփմնարկները հագեցնել նորագույն բժշկական սարքավորումներով, ինչը հնարավորություն կտա նորավարտ բժշկին լիարժեք կիրառել իր գիտելիքները, իսկ շրջանի բնակչին՝ տեղում ստանալ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում.

10) որակյալ պալիատիվ խնամքի համակարգի ներդրման համար նախատեսվում է օրենսդրաիրավական դաշտի ապահովմամբ հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական հաստատությունների պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման կարողությունների հզորացում, համապատասխան անձնակազմի ուսուցման նպատակով բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերի ներդրում և անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորում:

#### 4.2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետությունում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի այս

ուրուտի առաջընթացը երկրի զարգացման գերակայություններից է: Առաջնային խնդիրներ են կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, շարունակականության ապահովումը, դրանց համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին, մատչելի – հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար, կրթության համակարգի էլեկտրոնային միասնական քաղաքականության իրականացումը:

Նախադպրոցական կրթության բնագավառում նախատեսվում է՝

1) նախադպրոցական կրթության արդիականացում, դրա, որպես հետագա կրթության արդյունավետ և հեռանկարային գործոն, դերի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում.

2) ուրուտում աշխատող կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցերի արմատական բարելավում.

3) համընդհանուր ներառականության ապահովում.

4) շենքային պայմանների, ուսումնականության բազայի, գույքավորման, կահավորման, տեխնիկական հագեցվածության խնդիրների աստիճանական բարելավում.

5) մատչելիության և հասանելիության աստիճանի ապահովում Արցախի Հանրապետության բոլոր համայնքներում.

6) ոչ պետական նախադպրոցական հաստատությունների, զարգացման կենտրոնների գործունեության հստակեցում և պարտադիր լիցենզավորում.

7) նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և խնամքի կազմակերպման աջակցության այլընտրանքային ծրագրերի դիտարկում:

Հանրակրթության բնագավառում նախատեսվում է՝

1) կրթության բովանդակության արդիականացում՝ ուղղված սովորողների ճանաչողական, վերլուծական, անձնային և միջանձնային հմտությունների, դասավանդողների կարողությունների զարգացմանը, մասնագիտության հեղինակության և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացմանը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանը.

2) դպրոցի կառավարման համակարգի բարելավում.

3) փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման արդյունավետ մոդելների մշակում.



4) համընդհանուր ներառական հանրակրթության ապահովում.

5) կրթության որակի վերահսկողության և գիտելիքների գնահատման գործուն, ժամանակակից (ներառյալ՝ էլեկտրոնային) ձևերի ու մեթոդների, ինչպես նաև դրա միասնական համակարգի փուլային ներդնում.

6) 12-ամյա կրթությանը նոր բովանդակության հաղորդում՝ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայմամբ.

7) բնագիտական առարկաների և օտար լեզուների դասավանդման մոտեցումներին նոր բովանդակության հաղորդում.

8) հանրակրթության որակի բարձրացման և ավագ դպրոցի առաքելության ապահովման համար դպրոցների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրում և նորագույն տեխնոլոգիաների ներդնում (լաբորատոր սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, համացանց, որակյալ դասագրքեր և ուսուցչական ձեռնարկներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ).

9) ուսուցիչների վերապատրաստման շարունակականության ապահովում

10) ուսուցիչների աշխատավարձերի պարբերական ու զգալի բարձրացում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթության բնագավառներում նախատեսվում է՝

1) որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում, աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ կրթական համակարգի ճկունության ապահովում.

2) դասավանդող անձնակազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերի համակարգում.

3) համագործակցության զարգացման մեխանիզմների մշակում և կիրառում՝ այլ երկրների ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու համար՝ միաժամանակ իրականացնելով միջազգային կազմակերպությունների հետ փորձնական տարատեսակ ծրագրեր.

4) ոլորտի հաստատությունների հավատարմագրման գործընթացի ապահովում:

Բարձրագույն կրթության բնագավառում նախատեսվում է՝

1) անվճար բարձրագույն կրթության ներդրման և որակի ապահովման մեխանիզմների ու հակակշիռների մշակում.

2) որակապես նոր մակարդակ ապահովող բարձրագույն կրթության արդյունավետ, ճկուն և դինամիկ գործող համակարգի ստեղծում՝ հիմնված համամարդկային արժեքների վրա.

3) բուհական համակարգի արդի վիճակի բարելավում և դրա առաջանցիկ զարգացման ապահովում.

4) մասնագիտական կրթության շարունակականության և զարգացման անընդհատության, շրջանավարտ-բուհ հետադարձ կապի ապահովում.

5) մանկավարժական մասնագիտությունների հեղինակության բարձրացմանն ուղղված գործիքակազմի մշակում և կիրառում.

6) աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարձրագույն մասնագիտական (բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ) և հետբուհական կրթական ծրագրերի, լրացուցիչ և շարունակական կրթության իրականացում, գիտական և կիրառական հետազոտական աշխատանքների կատարման համար նպաստավոր միջավայրի ստեղծում.

7) միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան՝ Արցախի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների եվրոպական հավատարմագրման գործընթացի ապահովում:

Գիտության բնագավառում նախատեսվում է՝

1) գիտական ծրագրերի ֆինանսավորման արդյունավետության բարձրացում.

2) գիտական կադրերի սահուն սերնդափոխության համակարգի ներդրում.

3) արտասահմանյան գիտական կենտրոններում երիտասարդ կադրերի պատրաստման ծրագրերի մշակում և իրականացում.

4) գիտության պետական հովանավորչության ծավալների ավելացում.

5) հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների խրախուսում.

6) գիտության և կրթության ինտեգրում, բարձրակարգ մասնագիտական կադրերի պատրաստման ծրագրերի մշակում և իրականացում.

7) գիտական նվաճումների լայն օգտագործման համար համապատասխան տնտեսական պայմանների ձևավորում.

8) գիտության ժամանակակից նվաճումները հանրայնացնելու մեխանիզմների մշակում՝ միտված գիտական աշխատանքի և գիտնականի վարկի բարձրացմանը.

9) գիտական հետազոտությունների կազմակերպման մեխանիզմների կատարելագործում, այդ թվում՝ արտադրական ընկերությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր անձանց կողմից գիտության մեջ ներդրումներ կատարելու համար բարենպաստ պայմանների ստեղծում և գիտական ծրագրերի ու նախագծերի ֆինանսավորման մրցութային կարգի զարգացում.

10) կայացվող որոշումների թափանցիկության պայմաններում միջոցների օգտագործման նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովում:

#### 4.3. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Արցախի Հանրապետության մշակութային քաղաքականությունը միտված է լինելու լայն գործիքակազմերի կիրառմամբ ազգային արժեհամակարգի ավանդույթների վրա հիմնված մշակութային միջավայրի ձևավորմանը, մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծմանն ու իրացմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը, անհատի ստեղծագործական կարողությունների խթանմանը: Հետևողական քայլեր են ձեռնարկվելու մշակութային ծրագրերը հանրապետության ողջ տարածքում համաչափ իրականացնելու ուղղությամբ: Ազգային արժեհամակարգի վրա հիմնված մշակույթի զարգացման նպատակով նախատեսվում է՝

1) մշակութային ժառանգության և ոչ նյութական մշակութային արժեքների պահպանություն, պաշտպանություն, օգտագործում, զարգացում, մշակութային ինքնության վերարտադրություն ու հանրահռչակում.

2) ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակով ավանդական ոչ նյութական մշակույթի ուսուցում.

3) թանգարանների գործունեության պայմանների բարելավում, արցախյան ծագում ունեցող ականավոր գործիչների տուն-թանգարանների հիմնում, պահպանում և զարգացում.

4) մշակութային զբոսաշրջության զարգացում, էթնոգրաֆիկ վայրերի ստեղծում և հանրահռչակում.

5) գրադարանների արդիականացում, գրադարանային հավաքածուների պահպանում ու համալրման անընդհատության ապահովում, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովում, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում.

6) ներհանրապետական և միջհանրապետական թանգարանային և գրադարանային ցանցում համագործակցության ու փորձի փոխանակման խորացում.

7) ժամանակակից արվեստի և մշակութային կրթության զարգացում.

8) մշակութային ժամանակակից ենթակառուցվածքների զարգացում, նյութատեխնիկական բազայի բարելավում.

9) մշակույթի ոլորտի կադրերի վերապատրաստում, մասնագիտական կարողությունների զարգացում ու սոցիալական երաշխիքների տրամադրում.

10) մշակութային ծառայությունների ապակենտրոնացում և համաչափ զարգացում, շրջաններում մշակութային կյանքի աշխուժացում.

11) համահայկական և միջազգային համագործակցության ընդլայնում, արտերկրում արցախյան մշակույթի ներկայացում.

12) ազգային և քրիստոնեական արժեհամակարգի սերմանում մշակույթի միջոցով.

13) ազգային փոքրամասնությունների մշակույթի և էթնիկ ինքնության պահպանում.

14) պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրում, հաշվառում, պահպանում, առավել վտանգված հուշարձանների վերականգնում:

#### 4.4. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետությունում ժողովրդագրության, սոցիալական պաշտպանության և բնակարանային ապահովության ոլորտում պետության խնդիրն է լինելու սոցիալական արդարության ապահովումը, քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք և ամբողջական իրացման պայմանների ստեղծումը, սոցիալական պաշտպանության կարիք ունեցող խոցելի խմբերի համար առաջնահերթությունների սահմանումը, իրականացվող ծրագրերի ու մատուցվող ծառայությունների որակի, հասցեականության և արդյունավետության բարձրացումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության կայուն զբաղվածության ապահովումը, արժանապատիվ աշխատանքի պայմանների ստեղծումը, բնակարանային ապահովությունը, վերաբնակեցման գործընթացի ակտիվացումը:

Սոցիալական պաշտպանության ոլորտում նախատեսվում է իրականացնել՝

1) աշխատանքի իրավունքի ապահովում, բոլորի համար հավասար ու խթանող այնպիսի պայմանների ստեղծում, որ աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացի ունենա իր աշխատանքով բարեկեցիկ ապրելու հնարավորություն՝ պետության ուշադրության կենտրոնում պահելով նաև սոցիալապես խոցելի խմբերին.

2) զբաղվածության ճկուն պետական քաղաքականության իրականացում՝ հստակ թիրախավորված ծրագրերի ներդրմամբ.

3) ավելի քան 5,000 նոր աշխատատեղերի ստեղծում.

4) աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերաբերյալ տվյալների առցանց հարթակի շահագործմամբ բնակչության գործազրկության մակարդակի իջեցում, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակության բարձրացում, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդմանը և աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում.

5) անձի և ընտանիքի կարիքավորության գնահատման համակարգի հիման վրա սոցիալական ծրագրերի հասցեականության և

արդյունավետության մակարդակի բարձրացում, աղքատության մակարդակի շոշափելի նվազեցում.

6) Ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով նախատեսվում է՝

ա. Ժողովրդագրական քաղաքականությանն ուղղված ռազմավարության մշակում,

բ. ծնելիության և բազմազավակության խթանման արդյունավետ ծրագրերի իրականացում, այդ թվում՝ բոլոր երեխաներին տրվող ծննդյան միանվագ նպաստների չափերի նշանակալի ավելացում,

գ. մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափի սահմանում 26,500 ՀՀ դրամ՝ գործող 15,000 ՀՀ դրամի փոխարեն,

դ. ամուսնության միանվագ նպաստի փոխարեն՝ հարսանեկան ավանդույթների պահպանման և զարգացման նպատակով 1 մլն ՀՀ դրամ պետական աջակցության տրամադրում,

ե. հայրենադարձությանը և նպատակային վերաբնակեցմանը միտված խոշոր ծրագրերի իրականացում՝ պետական և մասնավոր միջոցներով.

7) բնակարանային ապահովության բնագավառում նախատեսվում է՝

ա. «յուրաքանչյուր ընտանիքի՝ առանձին բնակարան» սկզբունքով պետական քաղաքականության իրականացում,

բ. տարեկան մինչև 1,000 բնակարանի կառուցում.

գ. սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորում,

դ. գյուղական բնակավայրերում տուն կառուցելու նպատակով տրամադրվող դրամաշնորհի չափի ավելացում՝ 3 մլն ՀՀ դրամը դարձնելով 5 մլն ՀՀ դրամ, բնակավայրերի և շահառուների շրջանակների ընդլայնում,

ե. բնակարանների ձեռքբերման և բնակելի տների կառուցման համար տրամադրվող հիփոթեքային վարկերի մասով գործող սահմանափակումների արմատական վերանայում,

զ. հիփոթեքային ծրագրերից արտոնյալ պայմաններով օգտվող սոցիալական խմբերի ընդլայնում՝ ներառելով նաև քաղաքացիական հաշմանդամություն ունեցող անձանց,

է. շինանյութերի հատկացման և սոցիալական հիմքով տների վերանորոգման ծրագրերի հետագա ընդլայնում և ընթացակարգերի ու չափանիշների կանոնակարգում,

ը. 5 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարանների (բնակելի տների) տրամադրման շարունակում.

8) կենսաթոշակային համակարգի կառավարման, ինչպես նաև կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում, մասնավորապես՝

ա. կենսաթոշակառուների հաշվառման նոր էլեկտրոնային համակարգի կատարելագործում,

բ. զինվորական կենսաթոշակների՝ անկանխիկ եղանակով վճարումների (կենսաթոշակի գումարն անձի քարտային հաշվին փոխանցելու միջոցով) համակարգի ներդնում,

գ. թոշակների և սոցիալական այլ վճարումների շարունակական բարձրացում.

9) աշխատանքային հարաբերությունների մեջ չգտնվող (վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող) կանանց օրենքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող մայրության նպաստի չափի բարձրացում.

10) գոհված և անհայտ կորած ազատամարտիկների և զինծառայողների, բազմազավակ ընտանիքների և սոցիալապես խոցելի այլ խմբերի նկատմամբ պետական քաղաքականության շրջանակում գործող ծրագրերի ընդլայնում և նոր գործիքակազմի կիրառում.

11) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի շահագործում՝ սոցիալապես անապահով անձին (ընտանիքին) իր կարիքներին համարժեք որակյալ և մատչելի «մեկ պատուհանի» սկզբունքով սոցիալական համալիր ծառայությունների տրամադրման նպատակով.

12) երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի աստիճանական զարգացում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենցաղային պայմանների բարելավում, նրանց իրավունքների պաշտպանությանն ու հասարակության մեջ ինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացում.

13) հաշմանդամություն ունեցող քաղաքացիների իրավունքների պաշտպանության և սոցիալական երաշխիքների ընդլայնում.

14) տարեցների, միայնակ և խնամքի կարիք ունեցող անձանց կյանքի որակի բարձրացում, Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում, նրանց տրամադրվող դրամական հատուցումների չափերի պարբերաբար բարձրացում.

15) սոցիալապես խոցելի խավերին լրացուցիչ սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով «պետություն - մասնավոր հատված» գործընկերության զարգացում ու խորացում.

16) 1-ին և 2-րդ խմբերի զինվորական հաշմանդամների ընտանիքների կողմից օգտագործվող էլեկտրաէներգիայի և բնական գազի դիմաց պետական ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրի շարունակում, իրականացվող ծրագրի շահառուների շրջանակի հետագա ընդլայնում՝ սոցիալական ապահովության կարիք ունեցող այլ խմբերի ընդգրկմամբ.

17) փախստականների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացում.

18) փախստական, տեխնաժին և բնական աղետների կամ ոչ աղետների հետևանքով, կամ քանդման ենթակա, վթարային, ամրացման-վերականգնման ենթակա բնակելի շինությունների վերակառուցման հետևանքով վարձակալական հիմունքներով բնակվող, ինչպես նաև առավել ծանր պայմաններում գտնվող սոցիալական առանձին խմբերին պատկանող ընտանիքների վարձավճարի փոխհատուցման ծրագրի շարունակում:

#### 4.5. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմահայրենասիրական դաստիարակությունն Արցախի Հանրապետությունում լինելու է պետական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Այն միտված է ռազմահայրենասիրական դաստիարակության կայուն զարգացման ապահովմանը՝ նպաստելով գործունյա, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը, Պաշտպանության բանակում պատանիների ծառայության բարոյահոգեբանական ու ֆիզիկական նախապատրաստմանը, զինվորականի մասնագիտության գրավչության մեծացմանը, ազգային արժեքների պահպանմանը, կարգապահության ամրապնդմանը:



Ռազմավարական նպատակներն են՝ ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպումն ու իրականացումն ապահովող համակարգերի ստեղծումը և արդիականացումը, դրանց կայուն զարգացման ապահովումը՝ ժամանակակից մարտահրավերներին համապատասխան: Ոլորտում նախատեսվում է՝

1) ապահովել պետական, համայնքային և հասարակական կառույցների ներդաշնակ համագործակցությունը.

2) բարձրացնել հայրենաճանաչության և ազգային գիտակցության մակարդակը հասարակության շրջանում.

3) հետևողականորեն ամրապնդել կարգապահությունը ներհասարակական բոլոր հարաբերություններում.

4) հատկապես պատանիների ու երիտասարդների մոտ սերմանել հայրենիքը պաշտպանելու առաքելության գիտակցումը.

5) խթանել առողջ ապրելակերպի կանոնների պահպանումը ողջ հասարակությունում.

6) լայն շրջանակների անձանց ուսուցանել ռազմական գործի և ինքնապաշտպանության հմտություններ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով պատանիների և աղջիկների համար կկազմակերպվեն ուսումնա-ռազմական ճամբարներ, որտեղ կանցկացվի առարկայական ուսուցում հետևյալ ուղղություններով՝

1) ֆիզիկական վարժությունների և ձեռնամարտի հիմունքներին տիրապետում.

2) շարային պատրաստության դասավանդում.

3) ինքնապաշտպանության և ինքնապահպանման եղանակների տիրապետում.

4) ռազմական պատմության և ավանդույթների, ինչպես նաև զենքերի պատմությունների դասավանդում.

5) արտակարգ իրավիճակներում և ծայրահեղ պայմաններում գործողությունների տիրապետման ուսուցում:

Կկազմակերպվեն արշավներ ինչպես մարտական ուղիներով, այնպես էլ պատմամշակութային վայրերով, ռազմահայրենասիրական ուսուցողական խաղեր հանրապետության շրջաններում և ուսումնական հաստատություններում:

Բանակ-հասարակության կապի ամրապնդման նպատակով նախատեսվում է ապահովել և իրականացնել համատեղ ծրագրեր զինված ուժերի, անվտանգության և ոստիկանության կառույցների հետ, ձեռնարկել գործընթացներ՝ ուղղված պատանիների և աղջիկների կողմից զենքի տիրապետմանը, մարտական հմտությունների զարգացմանը և զինվորական ծառայության առօրյային ծանոթանալուն:

#### 4.6. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով աշխարհաքաղաքական և հասարակական-քաղաքական առկա զարգացումները, երիտասարդության շրջանում առկա հիմնախնդիրների սկզբնավորման ու դրսևորման առանձնահատկությունները, դրանց հաղթահարմանն ուղղված տեղական ու միջազգային փորձը՝ առաջիկա տարիներին նախատեսվում է՝

1) երիտասարդության ինքնիրացման և զարգացման պայմանների ապահովում, ոլորտի ենթակառուցվածքների զարգացում.

2) երիտասարդության շրջանում ազգային արժեքային կողմնորոշման ամրապնդում, երիտասարդության ռազմահայրենասիրական, հոգևոր, առողջ ապրելակերպի դաստիարակություն.

3) երիտասարդության հասարակական և քաղաքացիական ակտիվության խթանում.

4) համահայկական և միջազգային երիտասարդական համագործակցության զարգացում:

#### 4.7. ՄՊՈՐՏ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումն Արցախի Հանրապետության համար ունի առաջնային նշանակություն, քանի որ այն նախ և առաջ միտված է ֆիզիկապես կոփված, կրթված ու հայրենասեր սերնդի ձևավորմանը: Այս բնագավառում պետական քաղաքականության ուղղություններն են՝

1) բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը.

2) տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը.

3) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը.

4) բարձրակարգ մարզիկների պատրաստումը և միջազգային մրցաշարերին նրանց մասնակցության ապահովումը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջում է բազմակողմանիորեն մշակված գործողությունների համալիր ծրագիր, որը ներառում է՝

1) «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդումն ուսումնական բոլոր հաստատություններում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում.

2) Արցախի Հանրապետությունում մարզադպրոցների ու մարզական ակումբների ցանցի ընդլայնում՝ տարանջատելով զանգվածային սպորտը մասնագիտականից.

3) Արցախի Հանրապետությունում մարզական շարժման մասսայականությունն ապահովելու համար այդ շարժման մեջ ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, հասարակական մարզական կազմակերպությունների և մարզական ֆեդերացիաների ներգրավում և համայնքներում զանգվածային սպորտի զարգացման համար նախադրյալների ստեղծում.

4) առողջ ապրելակերպի և զանգվածային սպորտի քարոզում ու խթանում՝ զանգվածային, մարզական-առողջարարական շրջանային և հանրապետական միջոցառումների անցկացում.

5) հանրապետությունում մարզակառույցների և մարզահրապարակների ցանցի ընդլայնում՝ Ստեփանակերտ քաղաքում մարզահամալիրի ու մասնագիտացված մարզադահլիճների (մարմնամարզություն և ծանրամարտ մարզաձևերի) կառուցում, Ստեփան Շահումյանի անվան մարզադաշտի համապատասխանեցում միջազգային ստանդարտներին, թեթև արժետիկայի փակ մարզասրահի (մանեժ), մարզական լողավազանների (բաց և փակ) կառուցում, ենթաշրջաններում մարզական կենտրոնների հիմնում, որոնք կնպաստեն ուսումնամարզական պարապմունքների, զանգվածային մարզական միջոցառումների

անցկացմանը, ինչպես նաև բնակչության տարաբնույթ մարզական-առողջարարական ծառայությունների մատուցմանը:

Նշված ծրագրերը և միջոցառումները միտված են անձի, ընտանիքի, հասարակության մեջ ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվելու գաղափարը սերմանելուն և միջազգային ասպարեզներում Արցախի Հանրապետության հավաքական թիմերի ու մարզիկների մասնակցությունն ապահովելուն:

## 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

### 5.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

#### ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական քաղաքականության հիմնական նպատակն առաջիկա տարիներին ներառական տնտեսական աճի խթանումն է, որի արդյունքում յուրաքանչյուր քաղաքացի անհատապես կզգա տնտեսական աճի ազդեցությունը սեփական բարեկեցության վրա: Մակրոտնտեսական քաղաքականությունն ուղղված կլինի տնտեսական զարգացումն ապահովող կայուն մակրոտնտեսական պայմանների ստեղծմանը: Ծրագրային ժամանակահատվածում ՀՆԱ-ի իրական աճի միջին տեմպը կկազմի առնվազն 8 տոկոս: Մակրոտնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներն են լինելու՝

1) որակական տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովող պայմանների ձևավորումն ու ամրապնդումը.

2) բոլոր տեսակի ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը.

3) տնտեսության խոցելիության նվազեցումը արտաքին շուկայի գործոններից:

Նշված խնդիրների արդյունավետ իրականացման նպատակով կիրականացվի՝

1) ռազմավարական որոշումների ընդունում հարկային, ֆինանսական, ներդրումային, արտաքին տնտեսական ոլորտներում և տնտեսության ճյուղերում՝ աճի նոր աղբյուրներ ձևավորելու համար.

2) աշխատանքի արտադրողականության աճին ուղղված միջոցների ձեռնարկում, ինչը կապահովի աշխատավարձերի պատշաճ մակարդակ.

3) տնտեսական զարգացման ֆինանսավորման ոչ պարտքային միջոցների ներգրավմանն ուղղված քայլերի ձեռնարկում.

4) մտավոր կապիտալի, գործարար գաղափարների և նախաձեռնությունների ներգրավում Արցախի տնտեսություն՝ ապահովելով լավագույն հնարավորություններ դրանց իրացման համար:

Տնտեսության զգայունությունը պարբերաբար տեղի ունեցող գլոբալ ճգնաժամերի (լինի դա ցիկլային, կառուցվածքային կամ համավարակով պայմանավորված) բացասական ազդեցությունների հանդեպ պահանջում է ճկուն մակրոտնտեսական քաղաքականության իրականացում: Արտաքին ցնցումներից տնտեսության խոցելիության աստիճանն իջեցնելու նպատակով պահանջվում է երկրի համապարփակ՝ տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական, ինստիտուցիոնալ արդիականացում, ինչպես նաև տնտեսության դիվերսիֆիկացում և դրա որակական ցուցանիշների բարելավում:

Տնտեսական քաղաքականության ճյուղային գերակայություններն են լինելու՝

- 1) գյուղատնտեսությունը.
- 2) վերամշակող արդյունաբերությունը.
- 3) զբոսաշրջությունը.
- 4) տեղեկատվական տեխնոլոգիաները:

## 5.2. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ձեռներեցության զարգացման համար անհրաժեշտ կայուն, կանխատեսելի և հարմարավետ միջավայրի ապահովման առաջնային պայմաններն են՝

1) ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենսդրության կայունության ապահովումը.

2) բիզնեսի և իշխանության միջև երկխոսության ամրապնդումը, ինչը ենթադրում է գործարար համայնքի առաջարկությունների կանոնավոր հավաքագրում, փորձագիտական խմբերի ձևավորում պետական մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումը փոփոխելու վերաբերյալ առաջարկությունների

նախապատրաստում, գործարարի առաջարկությունների գծով միջոցառումների կատարման մշտադիտարկում, ինչպես նաև ձեռք բերված արդյունքների գնահատում:

3) ձեռնարկատիրական գործունեության հետ կապված վարչական գործընթացների էլեկտրոնային ռեեստրի ստեղծումը:

4) արտադրական կամ հասարակական նշանակության կառուցապատման հետ առնչվող ընթացակարգերի պարզեցումը, ենթակառուցվածքներին միանալու ընթացակարգի դյուրացումը: Նշված ընթացակարգերին առնչվող կազմակերպությունների և պետական կառույցների գործառույթների հստակեցումը լինելու է կառավարության այս ուղղությամբ գործունեության հիմնական թիրախներից մեկը:

5) գործարար և ստեղծարար ծրագրերի իրականացման բոլոր փուլերում խորհրդատվական ու ֆինանսական աջակցության ցուցաբերումը դրանց՝ ներառելով նաև խնդիրների առջև կանգնած տնտեսավարող սուբյեկտների առողջացման եղանակներ՝ հստակ չափանիշներով ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

6) միջոցների ձեռնարկում վերահսկողական գործունեության բարեփոխումները շարունակելու ուղղությամբ՝ ապահովելու համար ձեռնարկությունների նկատմամբ վարչական բեռի նվազեցումը, վերահսկիչ գործառույթների կատարման արդյունավետության բարձրացումը, ռիսկերի կառավարման մեխանիզմների համընդհանուր ներդնումը:

7) սուբյեկտների իրազեկումը պարտադիր պահանջների բովանդակության և փոփոխությունների մասին, նախազգուշացումների կիրառումը և թվային տեխնոլոգիաների համատարած օգտագործմամբ իրականացվող կանխարգելիչ այլ աշխատանքների կատարումը, որոնք պետք է բարեխիղճ ձեռնարկատիրոջը զերծ պահեն «անտեղյակության» պատճառով պարտադիր պահանջների խախտումներից:

Տնտեսության էական աճի ապահովման կարևորագույն գրավական է տնտեսական մրցակցությունը: Ըստ այդմ, ապահովվելու է տնտեսական մրցակցության պաշտպանությունը կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է՝

1) հակամենաշնորհային կարգավորման մեխանիզմների կատարելագործում և դրանց համապատասխանեցում մրցակցային իրավունքի միջազգային չափորոշիչներին:

2) ապրանքային շուկաներ նոր ձեռնարկությունների մուտքի և առաջմղման խթանում.

3) պետական մարմինների հակամրցակցային գործողությունների բացառում, պետության միջամտության հնարավորինս կրճատում տնտեսավարման տարբեր ասպարեզներում. պետական հսկողության (վերահսկողության), լիցենզավորման, պետական գրանցման, փորձաքննության, արտադրանքի սերտիֆիկացման և այլն: Ապրանքների և ծառայությունների շուկաներում գործելու համար պետության կողմից սահմանված սահմանափակումները կհասցվեն նվազագույնի և կորոշվեն բացառապես այնպիսի սահմաններում, որոնք ունեն կենսական կարևորություն.

4) պետական գնումների թափանցիկության բարձրացում, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների համար պետական պատվերների, պետական գնումների հասանելիության ապահովում.

5) ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանի հնարավորինս նվազեցում՝ լիարժեք օգտագործելով երկրի տեղական արտադրության ներուժը: Ուշադրության կենտրոնում կլինեն գործարար համայնքի կողմից բարձրացված խնդիրները, որոնց լուծումը կապահովի անհրաժեշտ պայմաններ տեղական արտադրողների մրցունակության բարձրացման համար՝ որպես վերջնարդյունք խթանելով ոլորտում գործող ընկերությունների քանակի ավելացումը և տնտեսության աշխուժացումը:

Ներդրումային քաղաքականությունն ուղղված կլինի ներդրումային գործունեության ակտիվացմանը, միաժամանակ բարձրացնելով ներդրումային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, որի շրջանակներում նախատեսվում է.

1) ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ստեղծում՝ ներդրումային գործունեության իրականացման հետ անմիջապես կապված օրենսդրության կատարելագործման միջոցով (այդ թվում, հողային, գույքային, շինարարության և այլ ոլորտներում): Հատուկ ուշադրություն կդարձվի

օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացման հարցերին.

2) ներդրումների, այդ թվում նաև պետական, արդյունավետության բարձրացում.

3) ենթակառուցվածքների զարգացման նպատակով մասնավոր ներդրումների ներգրավում.

4) ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքում ընթացակարգերի քանակի և դրանց ժամանակատարության կրճատում, անհրաժեշտ թույլտվությունների և գրանցումների առցանց ստացման հնարավորության ընձեռում.

5) ներքին խնայողությունների ավելացումը խրախուսող մեխանիզմների զարգացում, ներդրումների այլընտրանքային հնարավորությունների ստեղծում, մասնավորապես. քաղաքացիներին՝ ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտատոմսերի կամ բաժնետոմսերի ձեռքբերման հնարավորության ընձեռում՝ խնայողությունների դիվերսիֆիկացման և ավելի բարձր եկամտաբերությամբ ներդրումների համար.

6) մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման խրախուսում և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցում: Ընկերությունների կառավարման մարմինների հաշվետվողականությունը և դրանց որոշումների թափանցիկությունը պետք է դառնան մասնավոր հատվածի ռիսկերի կրճատման կարևոր հիմքեր:

Որպես ներառական տնտեսական զարգացման նախադրյալ՝ մեծապես կարևորվում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը, որի զարգացման առկա խոչընդոտների վերացման ուղղությամբ համալիր քայլեր են ձեռնարկվելու: Դրանք իրականացվելու են ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կայացման, ՓՄՁ կարողությունների զարգացման ճանապարհով՝ նպատակ ունենալով ՓՄՁ զարգացմամբ նպաստել երկրի, հատկապես շրջանների տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, տնտեսության բազմազանեցմանը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացմանը: Այդ ուղղությամբ կիրականացվեն՝

1) փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության համակարգի կատարելագործում, մասնավորապես՝ աջակցության հասցեականության բարձրացման նպատակով փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգման չափանիշների վերանայում.



2) միկրոձեռնարկությունների համար հարկային բեռի թեթևացում.

3) ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համագործակցության հնարավորությունների բացահայտում և դրանց սերտացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

### 5.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության գերակա ոլորտներից է: Այն առանձնացվում է որպես արտահանման ներուժ ունեցող ենթաճյուղերից մեկի՝ սննդի արդյունաբերության արժեշտի կարևորագույն օղակ և տարածքային համաչափ զարգացում ապահովող չափազանց կարևոր բնագավառ:

Գյուղատնտեսության արդյունավետ ու համաչափ զարգացման նպատակով կմշակվի գյուղատնտեսության ոլորտի զարգացումն ապահովող ռազմավարական ծրագիր, որտեղ կներառվեն ստորև ներկայացվող ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները՝

1) պարենային անվտանգության մակարդակի բարձրացում.

Ոլորտում վերջին տարիներին իրականացված մի շարք ծրագրերի արդյունքում որոշ պարենամթերքների մասով ինքնաբավության մակարդակը որոշակիորեն բարձրացել է (բուսական յուղ, ձու, տավարի միս, խոզի միս, թռչնամիս), իսկ ցորենի ինքնաբավության մակարդակը գերազանցում է 100 տոկոսի շեմը (2018 թվականին այն կազմել է 133,1 տոկոս՝ 2014 թվականի 91,7 տոկոսի դիմաց): Այնուհանդերձ, հիմնական պարենամթերքների մասով դեռևս չի հաջողվել հասնել բացարձակ ինքնաբավության, իսկ որոշների, օրինակ՝ կարտոֆիլի, բանջարեղենի, հատիկաբլիթի մասով հանրապետությունում առկա է միջին կամ միջինից բարձր ինքնաբավության մակարդակ:

Առաջիկա տարիներին կկարևորվի նշված գյուղատնտեսական մթերքների ներմուծման փոխարինման անհրաժեշտությունը, իսկ այդ մթերքների արտադրության խրախուսումն ու օժանդակումը կլինի առաջնային ռազմավարական խնդիրներից.

2) սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում.

Սննդամթերքի անվտանգության համակարգը դեռևս լիարժեք չի երաշխավորում սպառողների անվտանգ և որակյալ սննդամթերքով

ապահովումը, ինչպես նաև տեղական արտադրության սննդամթերքի մրցունակության բարձրացումն արտաքին և ներքին շուկաներում:

Արցախում արտադրված գյուղմթերքի համապատասխանեցումը սննդամթերքի անվտանգության չափորոշիչներին կբարձրացնի նաև գյուղատնտեսության մրցունակությունն արտահանման ոլորտում: Այս առումով կարևորվում են միջազգային պրակտիկայում կիրառվող մի շարք սկզբունքներ, մասնավորապես՝ սննդամթերքի արտադրության շղթայի դիտարկումը որպես մեկ միասնական ամբողջություն («դաշտից մինչև սեղան», «Ֆերմայից մինչև պատառաքաղ» սկզբունքները):

3) գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդնում.

Արցախի Հանրապետությունն աչքի է ընկնում բնակլիմայական ռիսկերի բարձր մակարդակով (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ): Յուրաքանչյուր տարի բնական աղետների պատճառով հսկայական վնաս է հասցվում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքներին և այգիներին՝ նվազեցնելով բերքատվությունն ու համախառն բերքը: Բնական աղետներից, ինչպես նաև գիշատիչներից հասցված վնասների ու վարակիչ հիվանդությունների հետևանքով, ամեն տարի գյուղատնտեսական կենդանիների մեծ գլխաքանակ է անկում ունենում:

Հաշվի առնելով այն, որ գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված ոլորտում տնտեսավարողները գործունեությունն իրականացնում են փոխառու միջոցների ներգրավմամբ, բնական աղետների հետևանքով վնասներ կրած գյուղացիական տնտեսություններն ուղղակի հայտնվում են անելանելի իրավիճակում՝ զրկվելով արտադրության հաջորդ փուլի համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից, վարկերը մարելու և արտադրության ծախսերը վերականգնելու հնարավորությունից:

Այս առումով գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման, վնասների համակարգված փոխհատուցման մեխանիզմների ներդրման, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների մակարդակի կայունության ապահովման նպատակով անդրադարձ կկատարվի գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության կարևորագույն հարցին՝ փաստելով, որ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդնումը ոլորտի առաջնային ռազմավարական խնդիրներից է.

4) այգիների տարածքների շեշտակի ավելացում.

Առաջիկայում նախատեսվում է շարունակել պետական քաղաքականությունը խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման ուղղությամբ՝ կարևորելով խաղողի և պտուղների արտադրության ծավալների ավելացումը (այգեգործությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակի բարձրացումը), դրանց ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը.

5) ոռոգման ժամանակակից համակարգերի ներդնում և ոռոգման ցանցի ընդլայնում ու կառավարման արդյունավետության բարձրացում.

Յուրաքանչյուր տարի պետական բյուջեից միջոցներ են հատկացվում ոռոգման համակարգի բարելավման, մասնավորապես ջրամբարների, ջրանցքների, ջրհորների կառուցման, վերակառուցման նպատակով, իսկ սկսած 2016 թվականից ներդրվել են ոռոգման կաթիլային, այնուհետև՝ ոռոգման անձրևացման համակարգերը:

Նախատեսվում է շարունակել և ավելի կատարելագործել նախորդ տարիներին ոլորտում իրականացված ծրագրերը, մասնավորապես՝ ջրամբարների ու ջրանցքների, արտեզյան հորերի և պոմպակայանների կառուցման ու վերակառուցման, ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման կատարելագործման, ջրային պաշարների արդյունավետ կառավարման միջոցով ոռոգվող տարածքների մակերեսը հասցնել մինչև 40,000 հեկտար, բարձրացնել ոռոգման ջրի հասանելիության մակարդակը.

6) գյուղտեխնիկայի պարկի պարբերաբար թարմացում և լիզինգային եղանակով տրամադրում հողօգտագործողներին.

Գյուղատնտեսության զարգացման հիմնական նախապայմաններից է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը: Չնայած, սկսած 2007 թվականից, արտերկրից ներկրվում են գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ, այդուհանդերձ, հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների մի մասը բնութագրվում է ցածր արդյունավետությամբ, ծախսատարությամբ, բարձր մաշվածությամբ, սարքինության ցածր մակարդակով և վերանորոգման համար անհրաժեշտ հավելյալ ծախսերով:

Նախատեսվում է առաջիկա տարիներին շարունակել տարվող քաղաքականությունը գյուղտեխնիկայի հավաքակազմի հետևողական

թարմացման ուղղությամբ և լիզինգային եղանակով տրամադրել տնտեսավարողներին.

7) գյուղմթերքի իրացման կայուն համակարգի ստեղծում՝ տարբեր գործիքակազմեր կիրառելով, այդ թվում՝ կենտրոնացված առցանց համակարգերի ներդրման միջոցով.

Գյուղմթերքի իրացման կայուն համակարգի ստեղծումը հանդիսանում է բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի ծավալների ավելացման կարևոր նախապայման: Այս տեսակետից կարևորվում է հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների ստեղծումը և փոխշահավետ համագործակցության զարգացումը, արտադրանքի իրացման (շուկայահանման) գործառույթների ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը, ինչպես նաև պետության օժանդակությամբ գյուղատնտեսական տարբեր միջոցառումների՝ ցուցահանդես-տոնավաճառների, փառատոների կազմակերպումը.

8) բարձրարժեք և օրգանական գյուղմթերքի արտադրության խթանում.

Օրգանական արտադրության ավելացմանն ուղղված միջոցառումների, որակի հսկողության համակարգի մշակումը նույնպես գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջնահերթություններից է: Օրգանական արտադրանքը ներկայումս մեծ պահանջարկ ունի աշխարհի ամենամեծ և ամենաշահութաբեր շուկաներում: Տեղական օրգանական արտադրության ավելացման միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ նախատեսվում է ոլորտի, մասնավորապես, փոքր գյուղացիական տնտեսությունների համար նոր հնարավորությունների և շուկաների ստեղծում.

9) անասնապահության զարգացման նպատակով նոր ծրագրերի իրականացում.

Առաջիկա տարիներին անասնապահության զարգացման ճանապարհին հիմնական միջոցառումներ կհանդիսանան՝

ա. բարձր մթերատու հատկանիշներ ունեցող կաթնատու և մսատու ուղղության գյուղատնտեսական տոհմային կենդանիների ներկրման միջոցով տեղական ցեղերի բարելավումը,

բ. անասնաբուծության վարման արդյունավետ համակարգերի ներդնումը,

գ. անասնազլխաքանակի հաշվառման, համարակալման և տեղեկատվական համակարգի ձևավորման հիման վրա տոհմային գործի կատարելագործումը,

դ. անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացումը,

ե. ոլորտի պետական աջակցության ծրագրերի հասցեական իրականացումը.

10) գյուղատնտեսական վարկերի մատչելիության ապահովում.

Գյուղատնտեսությամբ զբաղվողների համար բարելավված ֆինանսական ծառայությունների հասանելիությունը ոլորտի մրցունակության հիմնական շարժիչ ուժերից մեկն է:

Գյուղատնտեսության վարկավորման գործընթացում կկարևորվի գրավադրման մեխանիզմների բարելավումը, մասնավորապես՝ գրավի առարկայի շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև մատչելի տոկոսադրույքի և վարկավորման ժամկետների ապահովումը, պետական երաշխիքների տրամադրումը:

#### 5.4. ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Վերամշակող արդյունաբերության ոլորտում նպատակադրվում է ապահովել բարձր արտադրողական աշխատատեղերի ավելացումը և ընդլայնել արտահանման ներուժը՝ բարձրացնելով ոլորտի մրցունակությունը: Այդ նպատակի իրականացման առաջնային խնդիրներն են՝

1) արդյունաբերական համալիր կառավարման արդյունավետության բարձրացում՝ կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրման հիմքով.

2) արտադրանքի որակի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում.

3) ավանդական արդյունաբերական ճյուղերի շարունակական արդիականացում, միաժամանակ ձևավորելով արտահանմանն ուղղված նոր մրցունակ արտադրություններ, նման նախագծերի նկատմամբ պետական աջակցության համակենտրոնացում.

4) պետական աջակցության տրամադրման կարգի հստակեցում՝ հիմքում դնելով արտադրողի կողմից տեղական հումքի օգտագործման

աստիճանի, աշխատատեղերի առկայության և աշխատավարձի ֆոնդի ծավալի չափանիշները.

5) արտահանմանն ուղղված արդյունաբերողների շահերը միավորող և ներկայացնող խոշոր ընկերությունների (հոլդինգների) ստեղծում և զարգացում.

6) տեղական հումքի վերամշակման արտադրությունների առաջնահերթ զարգացում.

7) պետական աջակցության ցուցաբերում արտահանողներին՝ օտարերկրյա գործարարների հետ տնտեսական կապերի հաստատման և զարգացման, ինչպես նաև արտաքին շուկայում արտադրանքի առաջնդման գործում.

8) տնտեսական փոխհարաբերությունների աշխարհագրության ընդլայնում՝ ներառելով Ասիայի, Մերձավոր Արևելքի շրջանները.

9) Արցախի՝ որպես էկոլոգիապես մաքուր արտադրանքի արտահանողի դրական կերպարի ստեղծում.

10) տեղական արտահանողների՝ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներում մասնակցության, գովազդային, արտաքին շուկայում ապրանքների առաջնդման հետ կապված այլ ծախսերի, ինչպես նաև այլ երկրներում համապատասխանության գնահատման հետ կապված ծախսերի մի մասի հատուցում.

11) տեղական արտահանողներին ցուցաբերվող պետական աջակցության գործիքակազմի հետևողական կատարելագործում, մասնավորապես՝ արտահանման ապահովագրության մեխանիզմի ներդրում:

## 5.5. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջության կայուն զարգացումը պետության գերակա նպատակներից է, որի իրագործման միջոց են հանդիսանալու Արցախի Հանրապետության զբոսաշրջային արդյունքի զարգացումը, բազմազանեցումը և հանրահռչակումը թիրախային շուկաներում, ծառայությունների և ենթակառուցվածքների որակի բարելավումը:

Կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցառումներում առանցքային նշանակություն է տրվելու COVID-19 համավարակի հետևանքով զբոսաշրջության ոլորտի՝ ստեղծված ճգնաժամից դուրսբերմանը: Ճգնաժամը պահանջում է նոր մոտեցումներ, ռազմավարության և ընթացիկ ծրագրերի

վերանայում: Պետությունը այս իրավիճակում ստանձնելու է ոլորտի առաջնորդումը և իրականացնելու է ճգնաժամի հետևանքների չեզոքացման միջոցառումներ՝ միտված զբոսաշրջության ոլորտում գործող տնտեսավարողների աջակցությանը, ենթակառուցվածքների անխաթարության ապահովմանը և աշխատատեղերի պահպանմանը: Մշակվելու է հակաճգնաժամային գործողությունների պլան, և որի իրականացման արդյունքում ոչ միայն աջակցություն է ցուցաբերվելու տնտեսավարողներին, այլև նախադրյալներ են ստեղծվելու 2021 թվականին որոշակիորեն վերականգնելու աճի տեմպերը:

Միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները միտված են լինելու զբոսաշրջային նոր ու մրցունակ առաջարկի ձևավորմանը, նոր երթուղիների ու կլաստերների զարգացմանը: Հիմնական շեշտը դրվելու է մշակութային, արկածային, գյուղական, ժամանցային ու էկոզբոսաշրջության զարգացման վրա՝ ոլորտում գործունեություն ծավալող սուբյեկտներին ցուցաբերելով բազմակողմանի աջակցություն:

1) մշակութային զբոսաշրջության զարգացման աշխատանքները ներառելու են «Մելիքների ուղին» զբոսաշրջային թեմատիկ արդյունքի ձևավորումն ու զարգացումը՝ Արցախի մելիքական ժառանգության պահպանության, խթանման և զբոսաշրջային փաթեթներում ընդգրկման նպատակով: Աշխատանքներ են տարվելու Արցախի «Մետաքսի ճանապարհ»-ի ժառանգության զարգացման և խթանման համար: Ուշադրություն է դարձվելու դեպի պատմամշակութային վայրեր ենթակառուցվածքների նորոգմանը և բարեկարգմանը: Ծրագրի առանցքային կետ է լինելու Շուշի քաղաքի պատմամշակութային, քաղաքաշինական ու զբոսաշրջային համալիր ծրագրի իրականացումը: Թարմացվելու են Հյուսիսային և Հարավային զբոսաշրջային երթուղիների զարգացման ծրագրերը՝ առավել ընդգրկուն և իրատեսական միջոցառումների իրականացմամբ: Մշակութային զբոսաշրջության կլաստերային զարգացման շրջանակներում հեռանկարային համայնքներում իրականացվելու են զբոսաշրջության զարգացման ծրագրեր:

2) էկոզբոսաշրջության զարգացման ուղղության շրջանակը ներառելու է միջնաժամկետ կտրվածքով ազգային պարկերի և արգելոցների տարածքներում զբոսաշրջային ենթակառուցվածքների ձևավորումը,

Արցախում բնական զբոսաշրջության զարգացման համար առավել նպաստավոր տարածաշրջանների գոտիավորումը և զարգացման պլանների մշակումը: Մշակվելու է «Հունոտի կիրճ» և «Ազոխի քարանձավ» արգելոցների համաչափ և կայուն զբոսաշրջության զարգացման պլան.

- 3) արկածային զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղություններն են լինելու «Ճանապարհ-արահետ» քայլուղիների համակարգի բարելավումն ու հանրահռչակումը, քայլարշավային համայնքների հետ ակտիվ համագործակցության ձևավորումը, քայլարշավային նոր արահետների ստեղծումը և բարեկարգումը, հեծանվային ու ձիարշավային արահետների ստեղծումը և զարգացումը: Ուսումնասիրվելու է Արցախում ձմեռային զբոսաշրջության զարգացման հեռանկարը երկարաժամկետ հատվածում: Աշխատանքներ են տարվելու արկածային զբոսաշրջությամբ զբաղվող շահառուների հմտությունների շարունակական բարելավման և արկածային տուրիզմի կլաստների ձևավորման ուղղությամբ.
- 4) գյուղական զբոսաշրջության զարգացումը նախատեսվում է իրականացնել համապատասխան հայեցակարգի ընդունման և ներդրման միջոցով: Իրականացվելու են գյուղական համայնքներում զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող անձանց համալիր աջակցության ծրագրեր, գյուղական զբոսաշրջության համար առավել նպաստավոր տարածաշրջանների զարգացման և զբոսաշրջային արդյունքի բրենդավորման և ծառայությունների որակի ապահովման համակարգի ներդնման աշխատանքներ.
- 5) Ժամանցային զբոսաշրջությունը ներառելու է զբոսաշրջության զարգացման տեսանկյունից կարևոր փառատոների և միջոցառումների կազմակերպում, ավանդական խոհանոցի և գինու զբոսաշրջության զարգացում, ժամանցային զբոսաշրջության համար նպաստավոր տարածաշրջանների զարգացում:

Զբոսաշրջային արդյունքի հանրահռչակման ուղղության հիմնական նպատակն է լինելու Արցախի բրենդի ու զբոսաշրջային գրավչությունների առաջմղումը հատվածավորված ու առաջնահերթ շուկաներում: Աշխատանքներն իրականացվելու են թե՛ թվային տիրույթում, թե՛



ավանդական մարքեթինգային գործիքակազմի միջոցով: Ապահովվելու է Արցախի Հանրապետության մասնակցությունը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում և այլ միջոցառումներում:

Առաջնահերթ խնդիր է համարվելու հյուրընկալության ոլորտում ծառայությունների որակի ապահովումը՝ վերահսկողության ուժեղացման, կրթական ու վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով: Իրականացվելու է համակարգված վերահսկողություն հյուրանոցային տնտեսության օբյեկտների նկատմամբ, համապատասխան օրենսդրական փոփոխություններ են կատարվելու՝ ապահովելով ավելի խիստ պայմաններ հատկապես ծառայությունների մատուցման ոլորտում: Աշխատանքներ են տարվելու գործող զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ուղղությամբ:

Խրախուսվելու է ոլորտում ներդրումների և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ներդրումային նախագծերի իրականացումը, հատկապես՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության ձևաչափով: Նմանօրինակ նախագծերից է լինելու Շուշի-Ստեփանակերտ ճոպանուղու կառուցումը:

Ստեղծվելու է Զբոսաշրջության Խորհուրդ՝ զբոսաշրջության կայուն զարգացումն ավելի ներառական ու համակարգված կերպով ապահովելու նպատակով, ինչպես նաև ճգնաժամային պայմաններում պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ աշխատելու նկատառումներից ելնելով:

## 5.6. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը և քաղաքացիների կյանքի որակի բարելավումը հնարավոր է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ ներդրման միջոցով: Այդ նկատառումով հետևողականություն է ցուցաբերվելու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նկատմամբ տնտեսության և հասարակության կենսագործունեության բոլոր հատվածներում, այդ թվում՝ պետական կառավարման, կրթության, առողջապահության, արտադրության, սպասարկման ոլորտներում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման նպատակներն են՝

1) ոլորտում ներդրումների ներգրավման համար առավելագույնս բարենպաստ միջավայրի ձևավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղի առաջանցիկ զարգացումը, ներառյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության ծավալի և արտահանման կայուն աճի ապահովումը և նոր բարձրորակ աշխատատեղերի ստեղծմանն աջակցումը.

2) տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ ներդրումը՝ բիզնեսի արդյունավետության բարձրացման համար.

3) քաղաքացիների և բիզնեսի համար էլեկտրոնային ծառայությունների զանգվածային տարածումը, դրա հիման վրա կրթական և առողջապահական ժամանակակից համակարգերի ստեղծումը.

Նշված նպատակադրումների իրականացման ուղղությամբ կձեռնարկվեն հետևյալ միջոցառումները.

1) թվային տնտեսության իրավական կարգավորման համակարգի ստեղծում՝ հիմնված յուրաքանչյուր ոլորտի նկատմամբ ճկուն մոտեցման վրա.

2) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող հարկային օրենսդրության շարունակական բարելավում.

3) թվային տեխնոլոգիաների ներդրում պետական կառավարման և պետական ծառայությունների մատուցման ոլորտներում, այդ թվում՝ էլնելով բնակչության և փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների շահերից.

4) թվային տնտեսության անընդհատ թարմացվող կադրային ներուժի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթական ծրագրերի իրականացում, մասնավորապես՝ հմտությունների զարգացման դասընթացների, բուհերին տրվող պետպատվերների միջոցով.

5) երիտասարդության և բարձր դասարանցիների շրջանում ոլորտի հանդեպ հետաքրքրության զարգացում, ճշգրիտ գիտությունների դասավանդման ծրագրերի կատարելագործում:

Ոլորտի համալիր և երկարաժամկետ զարգացումն ապահովելու նպատակով կմշակվի տնտեսության թվայնացման հայեցակարգ:

## 5.7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Որպես տնտեսության ու հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա բազմակողմանի ազդեցություն ունեցող բնագավառ՝ մեծ ուշադրություն է դարձվելու ենթակառուցվածքների զարգացմանը, արդիականացմանը և մատչելիության բարձրացմանը: Այդ նպատակով իրականացվելու են հետևյալ ոլորտային քայլերը՝

1) էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, էներգակիրների մատակարարման դիվերսիֆիկացման վրա հենված էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը:

Էներգետիկ համակարգի քաղաքականության մաս է կազմելու վերականգնվող էներգետիկայի և էներգախնայող համակարգերի շարունակական զարգացումը: Արցախում չարտադրվող էներգակիրներից աստիճանական անցում կկատարվի տեղական արտադրանքին, ինչպես նաև կվերանայվի չգազիֆիկացված համայնքներում էլեկտրաէներգիայի՝ սպառողի համար գործող սակագինը՝ 25 դրամը դարձնելով 15 դրամ:

2) կապի և հեռահաղորդակցության ոլորտներում կատարվելու են աշխատանքներ ուղղված՝

ա. հեռահաղորդակցության սփռման, ծառայությունների և հաճախորդների սպասարկման որակի բարելավմանը,

բ. Արցախի Հանրապետության տարածքից դուրս Արցախի հանրային հեռուստատեսության սփռվածության հասանելիության ընդլայնմանը,

գ. հեռահաղորդակցության օպերատորի կողմից մատուցվող բոլոր ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման աշխատանքների իրականացմանը. նախատեսվում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը նվազեցնել Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության կապի օպերատորների ռոումինգի ծառայությունների սակագները,

դ. փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացմանը,

ե. ֆիլատելիայի զարգացման քաղաքականության շարունակականության ապահովմանը՝ դիտարկելով այն որպես փոստի ավանդական ճյուղ և Արցախի ճանաչելիության կարևոր միջոց:

3) տրանսպորտի ոլորտի զարգացումը նպատակաուղղված է լինելու մատուցվող ծառայությունների որակական մակարդակի բարձրացման միջոցով ժամանակակից տրանսպորտային համակարգի ստեղծմանը: Այդ նպատակին ուղղված քայլերը ներառելու են՝

ա. ուղևորափոխադրումների ոլորտում մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման, սպասարկման որակի և անվտանգության բարձրացման նպատակով նախատեսվում են փոփոխություններ ինչպես հասարակական տրանսպորտի կանոնավոր երթուղիներում, այնպես էլ՝ բոլոր տեսակի տաքսի ծառայությունների մատուցման բնագավառում. փոփոխությունները հիմնականում ուղղված կլինեն պետության, տրանսպորտային ընկերությունների և քաղաքացիների միջև բոլոր տեսակի հարաբերությունների կարգավորման ու դյուրացման նպատակով վարչարարության նվազեցմանը՝ բարելավելով վերահսկողությունը մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ.

բ. կուսումնասիրվեն նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները ավտոկայարանային, կանգառային և տոմսավորման գործընթացներում՝ ծառայությունների մատուցումը առավել դյուրին ու մատչելի դարձնելու նպատակով.

գ. կվերանայվի ներհանրապետական կանոնավոր երթուղիների կազմակերպման տրամաբանությունը՝ համայնքների որակյալ սպասարկման և տրանսպորտային ընկերությունների շարունակական զարգացման նպատակով.

դ. համապատասխան ծրագրի մշակմամբ և ներդրմամբ հանրապետությունում կիրթանվեն էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների շահագործումը և այդ մեքենաների սպասարկման մասնագիտական ծառայությունները (տեխնիկական սպասարկում, լիցքավորման կայաններ և այլն).

ե. կշարունակվեն իրավաքաղաքական ու անվտանգային ջանքերը Ստեփանակերտի օդանավակայանի լրիվ ու անվտանգ գործարկման ուղղությամբ, ինչպես նաև ուշադրության կենտրոնում կպահվեն ավիացիոն ենթակառուցվածքների պահպանումն ու անխափան աշխատանքի ապահովումը.

զ. աշխատանքներ են տարվելու փոքր և գերփոքր ավիացիան երկրի սոցիալ- տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում (գյուղատնտեսություն,

բնապահպանություն, առողջապահություն, արտակարգ իրավիճակներ, զբոսաշրջություն) օգտագործելու նպատակով.

4) քաղաքաշինության (կապիտալ շինարարության) ոլորտում շարունակական բնույթ կկրեն նախադպրոցական հիմնարկների, հանրակրթական դպրոցների, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների կառուցումը և հիմնանորոգումը, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների պահպանումը, շահագործումը և սպասարկումը, շենքերի և դրանց բակերի բարեկարգումը, խմելու ջրի համակարգերի կառուցումը: Ոլորտում պետության քայլերը կներառեն՝

ա. ճանապարհաշինության բնագավառում միջոցներ կձեռնարկվեն նոր տեխնոլոգիաներով ճանապարհների շինարարության ու շահագործման աշխատանքները կազմակերպելու համար. նախատեսվում է նաև նորմատիվ-իրավական բազայի կատարելագործում ու արդիականացում.

բ. կկառուցվի տարեկան շուրջ 80 կմ ճանապարհ.

գ. գյուղական բնակավայրերում կսալապատվի տարեկան մինչև 300,000 քառակուսի մետր ճանապարհ.

դ. խմելու ջրի մատակարարման բնագավառում առանձնահատուկ ուշադրություն կդարձվի արդեն իսկ կառուցված և արդիականացված ջրամատակարարման ցանցերի շահագործմանը, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարում չունեցող բնակավայրերում նոր համակարգերի կառուցմանը. քայլեր կձեռնարկվեն նաև ջրի որակի բարձրացման և դրա հանդեպ վերահսկողական մեխանիզմների բարելավման ուղղությամբ.

ե. ուշադրության կենտրոնում կլինեն կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովման խնդիրները՝ սեյսմազինվածության բարձրացմանը նպատակաուղղված ծրագրերի, ինչպես նաև վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ու տեխնածին երևույթների ազդեցության նվազեցման, հիմնականում կանխարգելիչ, ինժեներապաշտպանական միջոցառումների ծրագրերի մշակման և իրականացման միջոցով.

զ. ուշադրության ներքո կլինեն նաև հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հասարակական նպատակային նշանակության շենքերի մատչելիության ապահովման հարցերը.

Է. կիրականացվեն ոլորտի ներդրումային գրավչության բարձրացմանը և գործարար միջավայրի բարելավմանը նպատակաուղղված միջոցառումներ՝ պահպանելով կապիտալ շինարարության զարգացման առաջանցիկ տեմպերը և խթանելով ներդրումային նախաձեռնությունները հատկապես թույլ զարգացած տարածքներում: